ԱՐԱՄ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐ. ԱՔՍՈՐ ԵՎ ԳԱՂԹ. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

9(47·925)
Հ-57
Հշ·

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՄ ԱՆԱՆՅԱՆ

56 64

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀԱՅԵՐ. ԱՔՍՈՐ ԵՎ ԳԱՂԹ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941 (479.25): 950
ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.3 (5 Թու)
Ա 573

Աշխատությունը հրատարակության է երաշխավորվել
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ա 573 **Անանյան Արամ – Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ** - Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, 92 էջ:

Մենագրությունն անդրադառնում է Թուրքական պատմական ընկերակցության հրատարակած «Հայեր. Աքսոր և գաղթ» աշխատությանը, վեր է հանում Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականության երեսակներից մեկը՝ Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվի վերաբերյալ Անկարայի պաշտոնական պատմագրության հակագիտական մոտեցումը:

Ա $\frac{0503020913}{0176\,(01)-2005}$ 2005 ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.3 (5 Թու)

ISBN 99941-956-0-3

© ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005

ՄՈՒՏՔ

Երբ սուտը հաճախակի է կրկնվում,
ընդունվում է ճշմարտության փոխարեն:
Ֆր. Շատոբրիան

Ցեղասպանություն հանցագործությունը քաղաքակրթության պատմությանն ուղեկցել է թերևս մարդկության գոյության օրվանից. հին և միջնադարյան ժամանակաշրջաններում բռնակալներն ու թագավորները հպարտացել են նվաճած կամ իրենց ենթակա երկրներում իրագործած կոտորածներով և մարդկային հսկայական զոհերով: Բացառություն չի եղել նաև Օսմանյան կայսրությունը, որը թուրք ուսումնասիրող Իսմայիլ Մեթինի կարծիքով՝ դարեր ի վեր պահել է իր հեղինակությունը «ժողովուրդներին վախեցնելով, սպանություններ և համատարած ջարդեր կազմակերպելով»:[1]

19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին, միջազգային մարդասիրական իրավունքի զարգացմանը զուգահեռ, պետություններն ամեն կերպ ջանում էին կոծկել և պարտակել իրենց կատարած հանցագործությունները մարդկության և մարդկայնության դեմ: Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացումը, համաշխարհային համատեքստում մարդու ազատությունների սկզբունքների արմատավորումը նոր ժամանակաշրջանում պետությունների առաջ ծառացրին սեփական քաղաքացիների նկատմամբ ինքնիշխանության կորստի խնդիրը, ինչի մասին, դեռ ուշ միջ-

[1] I. Metin, Osmanlinin Kanli Tarihi, Ant Yayinlari, Istambul, 1996, s. 12.

նադարում գրել է միջազգային իրավունքի հիմնադիր Հուգո Գրոցիուսը:[2]

Ցեղասպանության ժխտումը արդարացիորեն համարվում է վերջնափուլ, երբ ազգի ոչնչացումից հետո արմատախիլ են արվում վերջինիս մշակույթն ու պատմական հիշողությունը:[3]

Արդեն իննսուն տարի է անցել 20-րդ դարի մեծագույն հանցագործություններից մեկից՝ Օսմանյան կայսրությունում իրականացված հայ ժողովրդի ցեղասպանությունից: Հիրավի, Մեծ եղեռնը լիովին փոխեց հայոց պատմության ընթացքը և խաթարեց տարածաշրջանի աշխարհաքաղաքական, տնտեսական ու ժողովրդագրական պատկերը: Անգամ այսօր Հայոց ցեղասպանությունը սոսկ պատմական իրողություն չէ, մանավանդ որ, հետևելով Օսմանյան կայսրության ավանդույթին, ժամանակակից թուրքական հանրապետությունը շարունակաբար ժխտում է նախորդ դարասկզբի ծանրագույն հանցագործությունը:

Այս առումով ուրացության ֆենոմենի համապարփակ ուսումնասիրությունը ծայրաստիճան արդիական է: Հենց ուրացումն է պատճառն այն իրողության, որ իր պատմական իրավունքների վերականգնման համար աշխարհասփյուռ հայ ժողովուրդը ստիպված է պայքարել Հայոց ցեղասպանության ճանաչման և համապատասխան միջազգային իրավական գնահատական ստանալու ճակատում: Ինչպես նշում է Թաներ Աքչամը, «Հայոց ցեղասպանության

[2] Տե՛ս R. Boghossian, Le Conflict Turco-Armenien, Beyrouth, 1987, pp. 57-59.

[3] Р. Ованнисян, Отрицание: Геноцид армян как прототип такого подхода: Вестник: Армянский Институт Международного права и Политологии в Москве, 2004, стр. 49.

ճանաչման թուրքական մերժումը բացասաբար է անդրադառնում խնդրո առարկայի շուրջ ծավալվող քննարկումներին: Այս փաստի ժխտումը ստիպել է շատ պատմաբանների փնտրելու գործողության ծրագրավորված լինելու ապացույցներ: Ահա ինչու քննարկման կենտրոնում մշտապես գտնվել են հետևյալ հարցերը՝ արդյո՞ք իրականում եղել է ցեղասպանություն, արդյո՞ք հայերի բնաջնջումը նախապես ծրագրված էր: Արդյունքում ընդհանրական պատկերը խեղվեց, և օբյեկտիվ քննարկումների համար տեղ չմնաց»:[4]

Թուրքական հանրապետության սկզբնավորման օրվանից պետական քաղաքականության մակարդակի է բարձրացվել թուրքերի և Թուրքիայի պատմության ուսումնասիրությունը՝ թիրախ ընտրելով հիմնականում քաղաքական իսթեբլիշմենթի պահանջներին ծառայելը:* Այս գործե-

[4] Т. Акчам, Турецкое национальное "я" и Армянский вопрос, Москва, 1995, стр. 95.

* Այսպես՝ վերջին երկու տասնամյակում Եվրոպական համայնք ներխուժելու համար թուրքական պետական ապարատը փորձում էր գիտականորեն հիմնավորել նաև թուրք ժողովրդի եվրոպականացված լինելու թեզը՝ այդ գործին լծելով թուրք և այլազգի բազում հետազոտողների: Ըստ նրանց՝ օսմանյան պետությունը անցել է արևմտականացման և եվրոպականացման մի քանի փուլ՝ քրիստոնեական Եվրոպայից տեխնոլոգիաներ և զենք ձեռք բերելուց մինչև Եվրոպայում կրթություն ստացած ընտրախավը և կառավարման ոլորտի ու վարչարարական արժեքները որդեգրելու ժամանակաշրջանը՝ Թանզիմաթի ընդունումը: Սակայն եվրոպականացումը շատ ավելի համապարփակ երևույթ է՝ մշակութային խորը ենթաշերտով, ավելի համապարփակ և ընդհանրական, քան վերոնշյալ փաստարկները: Քաղաքակրթական այս երևույթը խարսխած է մի քանի հիմնական արժեքների վրա: Իրականությունը փաստում է տրամագծորեն հակառակի մասին: Օսմանյան կայսրությունը, դառնալով ժամանակի հզորագույն ռազմաքաղաքական միավորը, օղուզական պետականության փորձից և իսլամից բացի որևէ ժառանգություն չուներ, իսկ ընդունելով մահմեդականություն՝ թուրքական հասարակությունը փոխ առավ նաև շարիաթը, որը հակադրվում էր

լառնը հետևողական է, ունի կոնկրետ նպատակներ, լուծում է արտաքին քաղաքական հիմնախնդիրներ. Անկարան կարողացել է ձևավորել պատմության նենգափոխման զարգացած ինդուստրիա:

Ժամանակակից Թուրքիան ստեղծել է Հայոց ցեղասպանության ժխտման օրենսդրական և ինստիտուցիոնալ կառույցներ՝ ակտիվ դիվանագիտական պայքար ծավալելով ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դեմ: Հայոց ցեղասպանության ժխտմանն ուղղված հանրապետական Թուրքիայի ջանքերը միանշանակորեն կարող են որակվել որպես համակարգված քաղաքականություն. առկա է գաղափարախոսական հիմքը, օրենսդրական դաշտը, պաշտոնական մշտապես քարոզվող դրույթների և միտումնավոր նենգափոխված պատմության տեսքով (policy), կան պետության կողմից առաջադրված հստակ նպատակներ (politics), ինչպես նաև ժխտմանը միտված քաղաքական, դիվանագիտական և գիտական հաստատությունների ցանց, որն անմիջականորեն իրականացնում է պետականորեն ծրագրված քայլերը (polity):

Հայոց ցեղասպանության ժխտումն ընդունում է տարաբնույթ դրսևորումներ: Թուրքական կողմն ունի առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրության տա-

եվրոպական իրավահարաբերությունների հիմքում ընկած հռոմեական իրավունքին. թուրքերը եվրոպացիներից տարբերվում են ճիշտ այնքան, որքան շարիաթը հռոմեական իրավունքից (տե՛ս Ö. Sanberk, "The outlook for the relations between Turkey and EU after the Cardiff summit", presented in Washington Institute for the Near East Policy. 20.07.1998: Turkey and European Integration, presented by the Turkish MFA, Б. Мюнниш. Европеицы ли турки, Нью-Йорк, нет даты , стр. 21.

րածքում տեղի ունեցած դեպքերի բազում, փոխլրացնող տեսակետներ: Սեփական «ճշմարտությունն» ապացուցելու համար գործի են դրվում պատմության նենգափոխման այլազան հնարքներ: Թուրքերի ժխտական պատմագրությունն ավանդաբար չարչրկում է նաև հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ շինծու տվյալները:

Հարկ է նշել, որ Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը չի սահմանափակվել սոսկ վիճակագրության նենգափոխմամբ, այլ կրել է կազմակերպված և երկարաժամկետ ծրագրի բնույթ: Այդ հայաջինջ քաղաքականության առավել ցայտուն կողմնորոշիչները երևան եկան 1878թ. Բեռլինի դաշնագրի ստորագրումից հետո, որում Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրի 16-րդ հոդվածում շրջանառության մեջ դրված «Հայաստան» եզրը փոխարինվեց «հայաբնակ մարզեր» անդեմ բնորոշմամբ: Հենց Հայկական հարցի միջազգայնացումից հետո Թուրքիան ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանում ժողովրդագրական պատկերը փոխելուն:[5] Սուլթան Համիդի կառավարությունը և նրանից իշխանությունը ժառանգած երիտթուրքերը արեցին ամեն ինչ հայերի բնաջնջումը իրականացնելու համար:

Ուղղակի կոտորածներից բացի, որոնց 1877թ. Բայազետում ու Ալաշկերտում զոհ գնացին 3 000, 1890-ականնե-

[5] Օսմանյան կայսրության հիշյալ քաղաքականության հիմնական ուղղություններից կարելի է նշել Արևմտյան Հայաստանում մահմեդականների վերաբնակեցումը, վարչական միավորների վերաբաժանումը՝ մահմեդական տարրի գերակշռություն ապահովելու սկզբունքով (գերիմենդերինգ), հայերի զանգվածային կոտորածները և բնակության համար անտանելի կենսապայմանների ստեղծումը, բռնի իսլամացումը և այլն:

ին՝ ողջ Թուրքիայում 300 000, 1904թ. Սասունում ավելի քան 7 000, իսկ 1909թ. Ադանայում 30 000 հայեր, թուրքական իշխանություններն իրականացնում էին կայսրության հայահոծ շրջանների հայաթափման քաղաքականություն՝ տեղաբնիկներին ստիպելով լքել պատմական հայրենիքը: 1877-1878թթ. պատերազմից հետո Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս է ներգաղթել 87 760 հայ:[6] 1913թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը պաշտոնապես հայտարարեց, որ 1878-1912թթ. Թուրքիայից արտագաղթել է 300-350 հազար հայ, նրանցից 150 հազարը Ռուսաստան, իսկ 150-200 հազարը Ամերիկա, Եգիպտոս, Բալկաններ ու եվրոպական այլ երկրներ:[7]

Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանություններն իրականացնում էին նաև բռնի հավատափոխության ծրագիր, որը շատ դեպքերում հայերի համար կյանքը փրկելու միակ միջոցն էր: Հավատափոխության ենթարկվելով, հայերը մոռանում էին մայրենի լեզուն և կրոնը, թրքանում կամ քրդանում էին: Այս ամենի մասին կան բազմազան վկայություններ 19-րդ դարավերջին Օսմանյան կայսրությունում և այլուր հրատարակվող հայկական համարյա բոլոր պարբերականներում: Նշենք սոսկ մի քանի օրինակ. 90-ական թվականներին մահմեդականություն էին ընդունել Գենջի, Ճապաղջուրի, Չքթեի, Փերազի, Սասունի, Խիզանի, Մուշի, Արաբկիրի, Խարբերդի և Դիարբեքիրի բազմաթիվ

[6] Է. Ռեկլյու, Լազիստան, Հայաստան և Քյուրդիստան, Վաղարշապատ, 1893, էջ 24:
[7] «Բյուզանդիոն», 1913, N 5079:

գյուղեր: 1901թ. միայն Վասպուրականում իսլամացած հայերի թիվը 10-12 հազար էր:[8]

Մեկ այլ սպանդ էր տեղի ունենում թղթի վրա: Ցեղասպանության ժխտման յուրաքանչյուր դեպքում մատնահաշվի վիճակագրությունը պատմական նենգափոխման տեխնոլոգիաների զինանոցում գրավում է առաջին տեղը: Ինչպես գրում է նշանավոր ցեղասպանագետ Ի. Չարնին, «Վիճակագրությունը հարցականի տակ է դրվում, որպեսզի ցույց տրվի, թե շատ ավելի քիչ մարդիկ են ներգրավված եղել»:[9] Բացառություն չէ նաև Օսմանյան կայսրության կողմից ծրագրված ու իրականացված 1915-1923թթ. Հայոց ցեղասպանությունը, որի ժխտումը տարեցտարի նոր երանգավորումներ է ստանում:

[8] Ավելի հանգամանալի տե՛ս Ա. Համբարյան, Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, 1969, N 2, էջ 105:
[9] Denials of the Holocaust: Templates for Gross Denial of a Known Genocide: A Manual, Encyclopedia of Genocide, Santa Barbara-Denver-Oxford, 1999, vol. 1, p. 168.

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԸՍՏ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹՈՒՐՔԱՄԵՏ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

Ինչպես նշեցինք գրքի առաջաբանում, Հայոց ցեղասպանության ուրացության թուրքական հնարքների զինանոցում կարևորագույն տեղ է զբաղեցնում ժողովրդագրական ցուցանիշների նենգափոխումը:

Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ Թուրքիայում հրապարակված գրեթե բոլոր աշխատություններում որոշ անդրադարձ է արվում Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակին: Թուրքական պատմագրությունը հակված է նշանակալիորեն նվազեցնել հայերի թիվը՝ ապացուցելու համար, որ ժողովրդագրական առումով կայսրությունում չկար որևէ նահանգ, որ մեծամասամբ հայաբնակ լիներ, և որ հայկական բարենորոգումների համար նախատեսված երկրամասերում բնակչության ճնշող մեծամասնությունը մահմեդական էր:

Թուրքական այս գործելաոճի արմատները հասնում են մինչև 1878 թվականը, երբ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով կայսրությունը հայաբնակ մարզերում անհապաղ բարեփոխումներ իրականացնելու պարտավորություն ստանձնեց: Օսմանյան առաջին պաշտոնական մարդահամարի տվյալներով (Աբդուլ-Ազիզ սուլթանի օրոք), Թուրքիայում հաշվվում էր շուրջ 2 400 000- 2 500 000 հայ, որոնք բնակվում էին երկրի թե եվրոպական և թե ասիական մասերում:[10] Թուրքական որոշ սալնամեների (նահանգային

[10] Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 98: Ե. Խաչանասյան, Հայոց թիվը, Բոստոն, 1965, էջ 8:

տարեգիր) հաշվարկով հայերի թվաքանակը հասցվում էր մինչև 3.5 միլիոնի:[11]

19-րդ դարում Օսմանյան կայսրությունում հայ բնակչության վերաբերյալ արժանահիշատակ տեղեկություններ են պահպանվել նաև հայկական մամուլում: 1867թ. «Մասիս» թերթը գրում է, որ Թուրքիայում բնակվում էր մոտ 3 միլիոն հայ, 1872թ. «Մշակը» վերահաստատում է նույն վիճակագրական տվյալը:[12] 1913թ. «Հորիզոնը», վկայակոչելով 1870-ականների թուրքական սալնամեները նշել է, որ կայսրության միայն հայկական վեց վիլայեթներում բնակվում էր 3 600 000 հայ:[13] Նույն թերթը ներկայացրել է հայ բնակչության տեղաբաշխումն ըստ վիլայեթների:

Սվազի վիլայեթ	900 000
Կարինի վիլայեթ	650 000
Վանի վիլայեթ	650 000
Բաղեշի վիլայեթ	400 000
Խարբերդի վիլայեթ	500 000
Տիգրանակերտի վիլայեթ	500 000

Մեկ այլ հետաքրքրական տվյալ է պարունակում թուրքական պետական պաշտոնյա Մկրտիչ բեյ Դադյանի «Հայերը Օսմանյան կայսրությունում» ֆրանսերեն աշխա-

[11] Ռ. Թաթոյան, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի խնդիրը թուրքական պատմագրության մեջ, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N5, Երևան, 2002, էջ 117:

[12] Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 99, տե՛ս նաև «Մասիս», 1867, N 818, «Մշակ», 1872, N 32:

[13] «Հորիզոն», 1913, N 27:

տությունը (1867թ.), ըստ որի կայսրությունում բնակվող հայերի թիվը 3 400 000 է:[14]

Վերն ասեցինք, որ հայ բնակչության թվաքանակի խնդիրն առանձնակի կարևորություն ստացավ, երբ 1878թ. կնքված Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով սուլթանական կառավարությանը պարտավորվեց հայաբնակ մարզերում իրականացնել բարեփոխումներ:[15] Հայերի իրական թիվը կեղծելու կայսրության առաջին փորձն արվում է հենց Բեռլինի կոնգրեսի ժամանակ, երբ կառավարությունը ներկայացրեց խայտառակ մի վիճակագրություն, ըստ որի Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում իբր բնակվում էր 586 հազար հայ:

Հայ բնակչությունը վեց վիլայեթներում ըստ Բեռլինի կոնգրեսին օսմանյան կառավարության ներկայացրած վիճակագրության:[16]

Վիլայեթ	Հայերի թիվը
Էրզրում	104 000
Բիթլիս	156 000
Վան	78 000
Խարբերդ	88 000
Դիարբեքիր	54 000
Սվազ	106 000
Ընդամենը	**586 000**

[14] М. бей Дадиан, Современное армянское общество. Армяне в Оттоманской империи, Тифлис, 1878, стр. 8: Տե՛ս նաև Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 99:

[15] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 128:

[16] "Сборник географических, топографических и статистических материалов по Азии", СПб, 1895, вып. 62, стр. 28-29.

Թուրքական պաշտոնական վիճակագրության սնանկությունն ապացուցելու նպատակով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն անցկացրեց սեփական հետազոտություն: Տվյալները սկսեցին հավաքագրել 1878թ. և վերջնականապես ստուգելով 1882թ.՝ ապացուցվեց, որ կայսրությունում հայ բնակչության թիվը հասել էր մոտավորապես երեք միլիոնի:[17]

Ի դեպ, իրականում հայ բնակչության թվաքանակը հաշվարկելիս պատրիարքարանի գործուղած անձինք անգամ «չկարողացան այցելել բոլոր հայաբնակ վայրերը, մի շարք շրջաններում քրդական ցեղապետերը, որոնք տիրացել էին հայերի գույքին և անձին խոչընդոտեցին նրանց, ուրիշ վայրերում էլ գյուղացիները, վախենալով հարկերի ու տուրքերի բարձրացումից, իրենց ընտանիքների անձանց թիվը ցույց էին տալիս շատ ավելի քիչ, քան կար իրականում: Եվ վիճակագիրները ստիպված էին շատ հաճախ բավարարվել թեմական հոգևոր առաջնորդների կամ տեղական հոգևորականների հաղորդած կիսատ-պռատ տեղեկություններով»:[18]

Այս պահից սկսած՝ սուլթանական կառավարությունը խնդիր դրեց ապացուցելու եվրոպական տերություններին, որ Արևմտյան Հայաստանում հայերը կազմում են բնակչության ընդհանուր թվի փոքր մասը միայն: Հայտարարվում էր, որ այնտեղ բնակվում է ոչ ավել քան 600 000-700 000 հայ:[19]

[17] Տե՛ս Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 100-101, ինչպես նաև՝ А. А. Аракелян, Статистика армянского населения Малой Азии, ("Известия Кавказского отдела Императорского русского географического общества", Тифлис, 1914, т. 22, стр. 121-125).

[18] Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 101:

[19] Ռ. Թաթոյան. նշվ. աշխ., էջ 117:

Վիճակագրական զեղծարարության գործում վերջին խոսքը պատկանում էր սուլթանին: Անգամ 1895թ., երբ տերությունները թուրքական կառավարությանն էին ներկայացրել հայկական բարենորոգումների ծրագիր, սուլթանի «թեթև ձեռքով», կառավարության կողմից հաշվարկված հայերի 900 000 թիվն անգամ համարվեց չափազանցություն:[20]

Հայ բնակչության թվի միտումնավոր նվազեցված ցուցանիշները այսօր ևս հաճույքով մեջբերվում են թուրքական պատմագրության կողմից: Արատավոր ժողովրդագրական քաղաքականության արդյունքում 1881/82-1893թթ. Օսմանյան կայսրության անցկացրած մարդահամարները վերջնահաշվում երկրում բնակվում է 1 157 519 հայ նախկին, ավելի քան 2.4 միլիոնի փոխարեն:[21]

1905թ. պաշտոնական տվյալների համաձայն, հայերի թիվը 1 173 233 էր, իսկ 1914թ.՝ 1 294 851:[22] Այս տվյալները թուրքական քաղաքական շրջանակներն օգտագործում էին թե ցեղասպանությունից առաջ, Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ խափանելու նպատակով և թե Մեծ եղեռնից հետո իրենց «անմեղությունը» փաստելու և պատմական հայրենիքի նկատմամբ հայերի պատմական իրավունքները մերժելու մտահոգությամբ:

Եվ այսպես, պաշտոնական վիճակագրության առանց այդ էլ կեղծ տվյալների շրջանառությունը որդեգրեց Հայոց ցեղասպանության ժխտմանն ուղղված թուրքական

[20] V. N. Dadrian. Warrant for Genocide, New Branswick, NJ, USA, 1999, p. 173.

[21] Տե՛ս, օր. K. Gürün. The Armenian File, The Myth of Innocence Exposed. N.Y., 1985, p. 86., A. E. Uzundere. İnsanlık Suçu: Iğdır ve Çervesinde Ermeniler'in Türk Kırımı, Ankara, TTK Basımevi, 2002, ss. 315-332.

[22] A. E. Uzundere... ss. 315-332.

պատմագրությունը: Թուրք հեղինակները, առանց կասկածի տակ առնելու այդ թվերի հավաստիությունը, համեմելով դրանք նույն թուրքական պաշտոնական մարդահամարների աղբյուրից բխող առանձին եվրոպական տվյալներով, որպես իրողություն են ներկայացնում ժողովրդագրական զեղծարարության արդյունքները:

Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի հարցն առաջինն արծարծողներից է Էսաթ Ուրասը՝ 1950թ. լույս տեսած և հետագայում բազմիցս վերահրատարակված իր «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» ստվարածավալ, սակայն գիտական որևէ հիմքից զուրկ աշխատությունում:[23]

Վիճակագրական տվյալների մեկնաբանման Ուրասի թերի մեթոդաբանությունը, որին հայ պատմագրությունը արժանի հակահարված է տվել, կիրառության առան մյուս թուրք պատմաբանները, որոնց աշխատություններում պարբերաբար շրջանառվում է ժողովրդագրական ցուցանիշների «էսաթուրասյան» ազատ և կամայական մեկնաբանությունը:[24]

Օսմանյան ժողովրդագրության դասականի համբավ վայելող Քեմալ Քարփաթն, իր հերթին, զարգացնելով ժո-

[23] E. Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950: ï»°ë Ý³¨, E. Uras, The Armenians in History and the Armenian Question, Ankara, 1988.

[24] Տե՛ս T. Gökbilgin. Milli Mücadele Başlarken. Mondros Mütarekesinden Sivas Kongresine, Birinci Kitap, Ankara, 1959. Şadı Koçaş, Tarih Boyunca Ermeniler ve Türk Ermeni İlişkileri, Ankara, 1967, Kamuran Gürün, Նշվ. աշխ. հայ պատմագրության հակահարվածը տե՛ս Новая и Новейшая История Армении в трудах современных зарубежных авторов, Национальная Академия Наук Республики Армения, Институт Востоковедения, Ереван, 1993, стр. 10-55.

ղովրդագրական ուսումնասիրությունների նենգափոխման խոտելի ավանդույթները, վիճարկում է առավել արժանահավատ հայկական սկզբնաղբյուրները, նույնպես խեղաթյուրելով բնակչության թիվը:[25]

1970-80-ականներից, երբ թուրքերը որդեգրեցին ժխտման առավել հարձակողական քաղաքականություն, Հայոց ցեղասպանության պատմության նենգափոխման «մարտակառքին» լծվեցին նաև որոշ արևմտյան ուսումնասիրողներ, որոնց ֆինանսավորումը և գրքերի հրատարակությունը ստանձնեց թուրքական կառավարությունը: Նրանց ցանկում էր Ստենֆորդ Շոուն, որը «Օսմանյան կայսրության և Ժամանակակից Թուրքիայի պատմություն» երկհատորանոց տրակտատում (1977թ.) հայ բնակչության թիվը հասցնում է 1 300 000-ի:[26]

Թուրքերի կողմից օգտագործվող ամերիկյան մեկ այլ հեղինակ է Ջասթին Մքքարթին, որի «Մահմեդականները և փոքրամասնությունները» աշխատությունը՝ հիմնված օսմանյան պաշտոնական տվյալների վրա, մատնահաշիվ վիճակագրության ևս մի նմուշ է:[27] Նրա հավաստմամբ՝ Հայոց ցեղասպանությունը չի եղել կանխամտածված գործողություն: Հեղինակը կարծում է նաև, որ 1915թ. հայ զոհերի թիվը եղել է 600 000՝ ի հետևանս ներքին ու արտաքին պատերազմի, համաճարակի և սովի:[28] Վարձու պատմաբանը հայ ազգաբնակչությունը համեմատում է ոչ թե առանձին վերց-

[25] Տե՛ս K. H. Karpat. Ottoman Population 1830-1914, The University of Wisconsin Press, 1985, pp. 52-53: Քարփաթի աշխատության քննադատությունը տե՛ս Ռ. Թաթոյան, նշվ. աշխ., էջ 120-121:
[26] S. and E. K. Shaw. "History of the Ottoman Empire and Modern Turkey", vol. 2. N.Y., 1977, pp. 315-316.
[27] J. McCarthy, Muslims and Minorities, NY, 1983.
[28] Ibid, p. 23.

ված էթնիկական խմբերի հետ, այլ, ինչպես Հայոց ցեղասպանությունը ժխտող մյուս հեղինակները, մահմեդականների ընդհանրական ցուցանիշի հետ. «Արևելյան նահանգներում կար հայերի մեծ կուտակում: Բիթլիսում բնակչության 31 տոկոսը հայեր էին, Վանում 26 տոկոսը: Սակայն անգամ այս երկու նահանգներում մահմեդականները կազմում էին հայ բնակչության կրկնակին»:[29]

Ըստ նրա, եվրոպացիներն ու ամերիկացիները 19-րդ դարավերջին ու 20-րդ դարասկզբին գաղափար իսկ չունեին, թե որքան հայ է ապրում Օսմանյան կայսրությունում: Որպես օրինակ բերվում է Ա. Ուբիչինի. տվյալները քաղված են «1844թ. մարդահամարից»[30], ինչը Մքքարթին համարել է կեղծարարություն: Ամերիկյան գիտնականը նշում է, իբր Արևելյան Անատոլիայում նման հետազոտություն չի կատարվել, ինչը նշանակում է, որ նշված տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը:

Իրականում օսմանյան վիճակագրությունը թվագրվում է 1845թ., ժխտողական հայտարարությամբ Մքքարթին հավանաբար ցանկացել է ցույց տալ իր բանիմացությունը: Նա նշում է նաև, որ որոշ եվրոպացի ուսումնասիրողների գնահատմամբ հայ բնակչության թիվը տատանվում էր կես միլիոնից երեք միլիոնի միջակայքում: Ի դեպ, Մքքարթիի կողմից քննադատվող Ուբիչինին Օսմանյան կայսրության ժողովրդագրական պատկերն ուսումնասիրել է բավական լրջորեն և խնդրո առարկայի վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ է: 1853թ. նա գրում էր,

[29] J. McCarthy, The Anatolian Armenians, 1912-1922, from Armenians in the Ottoman Empire and Modern Turkey (1915-1926), Boğazcı University Publications, Ankara, 1992, p. 21.
[30] A. Ubicini, Letters on Turkey, tr. Lady Easthope, London, 1856.

որ 1845թ. կայսրությունում հաշվարկվում էր շուրջ 35 000 000 մարդ, որոնցից հայերը կազմել են 2 400 000: Ըստ նրա տվյալների՝ հայերի մեծ մասը, շուրջ երկու միլիոնը՝ ապրել է թուրքական պետության ասիական մասում:[31] Նույն ուսումնասիրողը, հիմք ընդունելով թուրքական սալնամեները, նշում է, որ 1875-1876թթ. կայսրությունում բնակվել է 2,5 միլիոն հայ:[32]

Մքքարթին, առանց հիմնավոր ապացույցների, պնդում է, թե եվրոպացիները տվյալները հավաքում էին ուղղակի պարզունակ հարցումների միջոցով: Հայ ազգաբնակչության «ճշմարտացի» թվաքանակը հաշվելու համար նա համադրում է պաշտոնական վիճակագրության ու հայկական պատրիարքարանի տվյալները:[33] Վիճակագրության համադրությունը ցույց է տալիս այն հսկայական տարբերությունը, որ առկա է ոչ միայն տվյալների, այլև հաշվարկի մեթոդաբանության մեջ: Մքքարթին հայ բնակչության թիվը համեմատում է ոչ թե առանձին էթնիկական միավորների (օր. թուրքեր, քրդեր և այլն), այլ «մահմեդականներ» ընդհանրական եզրի հետ: Նման մոտեցումն իրավամբ քննադատել է Վ. Դադրյանը, քանզի նման հաշվարկներով թուրքերը փորձում էին կոծկել այն իրողությունը, որ իրենց իսկ կայսրությունում հանդիսանում են փոքրամասնություն:[34] Հայոց պատրիարքարանի ներկայացված տվյալների հետ

[31] М. А. Убичини, Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях, СПб, 1853, стр. 16.

[32] М. А. Убичини, Современное состояние Оттоманской империи, ЦПб, 1877, стр. 35-36.

[33] J. McCarthy, Population of the Ottoman Armenians, The Armenians in the Late Ottoman Period, Ankara, 2001, p. 66.

[34] V. Dadrian, նշվ. աշխ., էջ 179-183.

համեմատության մեջ անգամ թուրքերը փոքրամասնություն կկազմեին Արևմտյան Հայաստանում:

Ի դեպ, պատրիարքարանի և Մքքարթիի կողմից վկայակոչվող տվյալների անհամապատասխանության պատճառներից մեկն այն է, որ կառավարության և հայկական եկեղեցու հաշվումները ունեն որոշակի տարբերություն հաշվառվող տարածքի առումով: Հիշեցնենք, որ հայ եկեղեցու վիճակագրությունը չի ներառում ոչ հայկական այն երկրամասերը, որոնք թուրքական իշխանությունները կցել էին հայկական վիլայեթներին՝ տեղերում ժողովրդագրական պատկերը փոխելու համար:[35]

Հայկական վեց վիլայեթների ազգաբնակչության թվի համեմատությունը ըստ Ջ. Մքքարթիի

	Օսմանյան վիճակագրություն	Հայկական պատրիարքարանի տվյալներ
Հայեր	784 917 (19%)	1 018 000 (39%)
Այլ քրիստոնյաներ	176 845 (4%)	165 000 (6%)
Մահմեդականներ	3 173 918 (77%)	1432000 (55%)
Թուրքեր*	-"-	666 000

Ըստ Մքքարթիի, առաջին աշխարհամարտի ընթացքում տեղի է ունեցել հայ-թուրքական քաղաքացիական պա-

[35] J. McCarthy, Population of the Ottoman..., p. 67.

* Թուրքական բնակչության թիվը բերվել է որպես օրինակ, ցույց տալու համար, որ պատրիարքարանը տիրապետում էր հայկական վիլայեթներին վերաբերող ավելի մանրամասն վիճակագրական տվյալների:

** Ցուցանիշը չի հաշվարկվել

տերազմ: Այս դրույթն այնքան անհեթեթ է, որ անգամ թուրքական պաշտոնական պատմագրությունը չի տարփողում:[36]

Անդրադառնալով 1927թ. Թուրքիայի առաջին մարդահամարին և դրանում առկա հայերի փոքր թվին, հեղինակն ակներև ցինիզմով գրում է. «Այն ժողովուրդը, որն ապրել է Արևելյան Անատոլիայում մինչև նշված ժամանակը պարզապես հեռացել է»:[37]

Մքքարթիի ներկայացրած տվյալները և նրա աշխատության մեթոդաբանությունը դեռ ևս 1980-ականներին սուր քննադատության են ենթարկել հայագիտական շրջանակները, քանի որ աղբյուրների թվում հեղինակը ամենաարժանահավատը համարում է բազմաթիվ նշանավոր ուսումնասիրողների կողմից վիճարկվող օսմանյան մարդահամարները:[38]

Այսպիսով, նվազեցնելով հայ բնակչության իրական թիվը և կիրառելով վիճակագրական գնահատման սխալ ու հարմարեցված մեթոդներ՝ անհամադրելի տվյալների հիման վրա, թուրք և ռևիզիոնիստ պատմաբանները նպատակ են դրել ժխտել Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունը, նրա կանխամտածված բնույթը:*

[36] Թաներ Աքչամի հարցազրույցը վերցված http://www.sansursuz.com թուրքական տեղեկատվական էջի 23/06/2004թ. թողարկումից:

[37] J. McCarthy, Muslims and Minorities, նշվ. աշխ., p. 121.

[38] A. Nigogosian, Book Reviews, Muslims and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of Empire: Armenian Review, Winter 1986, vol. 39, num. 4-156, pp. 112-114.

* Որոշ թուրք պատմաբաններ վկայակոչում են 2 300 000-2 400 000 թիվը, ոմանք էլ պնդում են, թե կայսրությունում հայ բնակչության իրական թիվը տատանվել է 2-3 միլիոնի արանքում: Տե՛ս, օրինակ, M. Çulcu. Marjinal Tarih Tezleri, Istambul, 1994, s. 263. Y.G Çark. Türk Devlet Hizmetinde Ermeniler 1453-1953, Istanbul, 1953, s. 240. L. Marashlian

2. «ՀԱՅԵՐ. ԱՔՍՈՐ ԵՎ ԳԱՂԹ» ՆՈՐԱԹՈՒԽ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՄԱՆ ԵՎՍ ՄԻ ՓՈՐՁ

Բացառություն չէ նաև. Թուրքական պատմական ընկերակցության (Türk Tarih Kurumu) հրատարակած «Հայեր. Աքսոր և Գաղթ» աշխատությունը, որը հեղինակել է Հիքմեթ Օզդեմիր, Քեմալ Չիչեք, Օմեռ Թուռան, Ռամազան Չալըք և Յուսուֆ Հալաչօղլու խումբը:[39] Գիրքը, որ լույս է տեսել 2004թ. գարնանը, միանգամից արժանացել է թուրքական մամուլի դրվատական գնահատականին:[40]

Աշխատանքը հավակնում է «նոր խոսք» ասել առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի ճակատագրի վերաբերյալ: Հեղինակային խմբից խլելով մի քանի տարի և նշանակալի ֆինանսական միջոցներ, այն սոսկ թուրքական պատմագրության ավանդույթների կրկնությունն է, Հայոց ցեղասպանության ժողովրդագրական ժխտման ավելի համակարգված, սակայն անհաջող փորձ: Երեք գլուխները՝ «Հայ բնակչությունը Օսմանյան կայսրությունում», «Աքսոր և հայերի վերաբնակեցումը Սիրիայում», «Հայերն աքսորից հետո», վերաշարադրում են թուրքական պատմագրության չարչրկված թեզերը, դրանք մատուցելով կեղծ գիտականության գունավորմամբ:

Աշխատության դեմ բացասական գրախոսական

Politics and Demography. Armenians, Turks and Kurds in the Ottoman Empire, Cambridge, MA, 1991, p. 38.

[39] H. Özdemir [ve baş] Ermeniler: Sürgün ve Göç, Ankara, 2004.

[40] Տե՛ս, Milliyet, 16/05/2004, www.eraren.org/tur/haberler/kongre2003program.htm, www.haberanaliz.com/detay.php?detayid=1266, www.ermenisorunu.gen.tr/turkce/ kitaplar/ermeniler_surgun_ve_goc.html.

հրապարակեց թուրք հայտնի պատմաբան Թաներ Աքչամը Ստամբուլում լույս տեսնող «Agos» օրաթերթի 2004թ. սեպտեմբերի 3-ի համարում, որտեղ մատնանշվում էին գրքի մասնագիտական թերությունները և պատմական փաստերի ու իրողությունների աղաղակող խեղաթյուրումները: Աքչամի բացասական գրախոսականին ի պատասխան, Քեմալ Չիչեքը, որևէ հիմնավոր փաստարկ չբերելով, Աքչամին մեղադրեց գիտական տհասության մեջ:[41] Հիրավի, երբ վերջանում են փաստարկները, թուրք հեղինակների բառապաշարից, ինչպես առատության եղջյուրից, հորդում են հայհոյանքները:

Աքչամի արձագանքը չուշացավ. սեպտեմբերի 17-ի համարում նա հանդես եկավ «Մի սպանդի անատոմիան» ընդարձակ հոդվածով, որտեղ ևս մեկ անգամ ապացուցեց, որ թուրքական պաշտոնական պատմագրության մեթոդները և գործելաոճը մնացել են անփոփոխ. հեղինակային խումբը փաստաթղթերի իմաստը միտումնավոր աղավաղել է՝ ներկայացնելով Հայոց ցեղասպանության ուրացության թուրքական պատմագրության ավանդական հունում: Այլախոհ պատմաբանի պատասխանում հանգամանորեն բացահայտվում են աշխատության հեղինակների թերացումները, մասնավորապես օտարալեզու փաստաթղթերի թարգմանությունների հարմարեցումը, նյութին չտիրապետելը, հայ և օտար սկզբնաղբյուրների չիմացությունը: Ըստ Աքչամի, հարձակողական ոճով փորձ է արվում կոծկել աշխատության գիտական սնամեջությունը. ժառանգական ախտանիշ, որով վարակված է թուրքական ողջ պատմագրությունը:

Ինչպես դիպուկ նշում է Աքչամը, «Պրոֆ. Չիչեքը և

[41] Տե՛ս http://www.ermenisorunu.gen.tr/turkce/makaleler/makale64.html 22/09/2004: Սույն կայքը համացանցում Հայոց ցեղասպանության թուրքական ժխտման «մասնագիտացված էջերից» մեկն է:

ընկերները փաստաթղթերը սխալ են թարգմանել՝ իմաստները նենգափոխելու նպատակով, իրենց պնդումներին հակասող արտահայտությունները դիտավորյալ հանել են և խեղաթյուրել»:[42]

Թուրք պատմաբանների նման հակագիտական վարքը փաստում է, որ գրքի հիմնական նպատակը, ոչ այնքան հայ բնակչության իրական թվի ճշգրտումն է, որքան այն վարկածի հերքական վերարծարծումը, որ Օսմանյան կայսրությունը նպատակ չի հետապնդել կազմակերպելու ցեղասպանություն:

Վերջաբանում առաջ է քաշվում ծանոթ մեղադրանքը, որ երբ «Չաննակկալեում (1915թ. Անտանտի զորքերի ափհանումը Դարդանելում - *Ա. Ա.*) կենաց ու մահու պայքար էր մղվում, «հայկական կոմիտեները» սկսեցին համագործակցել թշնամի տերությունների հետ՝ անկախ պետություն ստեղծելու ակնկալիքով, պարտվեցին և կորցրին թուրքերի վստահությունը:[43] Փորձ է արվում ապացուցելու այն կեղծ թեզը, որ հայերի տեղահանությունը և կազմակերպված սպանդը թելադրված էր սոսկ պատերազմական իրողություններով՝ կայսրության անվտանգության հրամայականից ելնելով:*

[42] Agos, 17/09/2004.

[43] H. Özdemir [ve baş], s. 179.

* Կարծում ենք, որ թուրք պատմաբանները գոնե պիտի տեղյակ լինեն, որ Անտանտի ուժերը Դարդանելում առաջին ափհանումն իրականացրին 1915թ. ապրիլի 25-ին, երբ հայերի տեղահանության և կազմակերպված կոտորածի մահասփյուռ մեքենան սկսել էր իր ընթացքը: Ցեղասպանության իրականացման որոշումը ծրագրվել և ընդունվել էր Իթթիհատ կուսակցության կողմից առաջին աշխարհամարտի նախօրեին: А. Авакян, Геноцид Армян 1915г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1995, стр. 6-31.

Գրքում միտումնավոր անտեսված են հայկական արխիվային նյութերը: Հեղինակները որևէ անդրադարձ չեն կատարել հայ բնակչության թվի վա ազդող արհեստական գործոններին՝ 1895-96թթ. համիդյան ջարդերին, որոնց զոհ գնացին 300 000 հայեր, և 1909թ. Ադանայի կոտորածին, որն իր հերթին խլեց 30 000 հայերի կյանք:

Առաջին գլխում հեղինակները փորձում են պարզել օսմանյան Թուրքիայում հայ բնակչության թիվը: Աղբյուրների համադրումը նրանց հանգեցրել է այն մտքին, որ 1914-ի դրությամբ հայ բնակչությունը 1.5 միլիոնից քիչ չի եղել:[44] Պետք է փաստենք, որ նախկինում թուրքական պաշտոնական պատմագրության կողմից հրապարակված տվյալների հետ համեմատելիս, սույն գնահատականը չափազանց շռայլ է:[45] Սակայն պիտի հիասթափեցնենք հայ-թուրքական հնարավոր երկխոսության ջատագովներին. պատճառն այստեղ Հայոց ցեղասպանության նկատմամբ Անկարայի քաղաքականության մեղմացումը չէ: Թուրքական պաշտոնական պատմագրությունը Մեծ եղեռնի ուրացմանը ցանկանում է հաղորդել կեղծ գիտական բնույթ:

Թուրք հետազոտողները համեմատության համար ներկայացնում են օսմանյան պաշտոնական վիճակագրության՝ քննադատության չդիմացող տվյալները, որտեղ հայերի թիվը 1893, 1910/11 և 1914 թվականների դրությամբ տրվում է հետևյալ համամասնությամբ:

[44] H. Özdemir [ve baş], s. 52.

[45] Համեմատության համար նշենք, որ նախորդ գլխում մեր կողմից ներկայացված թուրքական կամ թուրքամետ ժողովրդագրական ուսումնասիրությունների մեծամասնությունը հիմնված է օսմանյան պաշտոնական վիճակագրության կամ դրանից բխեցրած տվյալների վրա:

Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թիվը ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների[46]

1893	1910/11	1914
1 001 465	1 120 748	1 229 007

Ստորև ներկայացնում ենք Օսմանյան կայսրությունում հայերի թվի փոփոխման դինամիկան՝ պաշտոնական վիճակագրական տվյալների համադրմամբ:[47]



Թուրքական պատմագրությունը չի կարողանում պատասխանել այն հարցին, թե ինչ կատարվեց այն 1 398 544 հայերի հետ, որոնք, չգիտես ինչու, անհետանում են 1845-1893թթ.:

[46] H. Özdemir [ve baş], ss. 15-17, տվյալները վկայակոչված են ըստ K. Karpat, Ottoman Population. աշխատության:

[47] 1905թ. վիճակագրական ցուցանիշը տե՛ս Kamuran Gürün. The Armenian File, The Myth of Innocence Exposed, N.Y..., 1985, p. 86.

Վիճակագրությունը գիտություն է, որն ունի միտումնավոր պատմագրական ուսումնասիրության ձևերից որոշակիորեն տարբերվող մեթոդաբանություն և դրա տարրական սկզբունքների չիմացությունը աշխատության հեղինակներին հանգեցրել է խեղաթյուրված եզրահանգումների: Վկայակոչելով ի սկզբանե կեղծ վիճակագրական տվյալներ, նրանք եզրահանգում են. «1893-ից 1914թթ. հայ բնակչությունն աճել է 30 տոկոսով (293366 մարդ)»:[48]

Ըստ նահանգների ներկայացված վիճակագրությունը, սակայն, ցույց է տալիս, որ ժողովրդագրական տվյալներ հավաքագրելիս և ամփոփելիս թուրք ժողովրդագիրները ոչ միայն նշանակալի սխալներ են անում, այլև իրարամերժ թվախաղ են անում, ինչի արդյունքում վիճակագրական ցուցանիշները անբացատրելի շեղումներ են պարունակում:

Ճգնելով քողարկել օսմանյան վիճակագրության մեթոդաբանական խեղճությունը, վերջնահաշվում նրանք գրանցում են հայ բնակչության ընդհանուր թվի աճ: Ստորև ներկայացնում ենք հեղինակային խմբի կողմից ներկայացվող տվյալներում առկա անհասկանալի տատանումները, որոնք վկայում են, որ կայսրության պաշտոնական վիճակագրությունը բավական հեռու է եղել հայ բնակչության թվային արժանահավատ տեղեկություններից: Դրա վկայությունը 1910/11թ. և 1914թ. ըստ նահանգների հայ բնակչության թվաքանակների բաղդատումն է:

Ստորև շեղատառով ներկայացնում ենք ամենաանտրամաբանական ցուցանիշներն ու ակնառու անհամապատասխանությունները և վիճակագրական տատանումները:[49]

[48] H. Özdemir [ve baş], s. 11.
[49] Ibid, ss. 15-17.

Օսմանյան վիճակագրական տվյալները վիլայեթներում հայ բնակչության մասին, համաձայն «Հայեր. Աքսոր և Գաղթ» աշխատության

	1893	1910/11	1914
1	2	3	4
Ադանա- Մերսին	***44 799***	***47 047***	***50 139***
Իչել	-	-	341
Այդին	14 140	18 287	19 395
Մենթեշե	-	-	12
Անկարա	***67 490***	***89 780***	***44 507***
Կեսարիա	-	-	***48659***
Բիգա	1 741	2 336	-
Բուրսա	***57 918***	***77 865***	***58 921***
Աֆյոն Գարահիսար			7 437
Իզմիթ	37 220	51 265	55 403
Կաստամոնու	2 777	9 809	8 959
Բոլու	-	-	2 961
Կոնիա	9 813	15 537	12 971
Նիյդե	-	-	4 890
Անթալիա	-	-	630
Սըվազ	***116 545***	***144 056***	***143 406***
Էրզրում	***101 138***	***109 310***	***125 657***
Վան	***60 448***	***59 382***	***67 792***
Բիթլիս	***101 358***	***90 219***	***114 704***
Խարբերդ	***73 178***	***67 512***	***76 070***
Դիարբեքիր	***46 823***	***43 610***	***55 890***
Հալեպ	***52 407***	***64 358***	***35 104***
Մարաշ	-	-	***27842***
Ուրֆա	-	-	***15161***
Տրապիզոն	***41 780***	***50 055***	***37 549***
Ջանիկ	-	-	***27 058***

1	2	3	4
Էսքիշեհիր		-	8 276
Կարասի	-	-	8 544
Էդիրնե	***16 642***	***26 144***	***19 725***
Բաղդադ	349	373	-
Բասրա	35	36	-
Բեյրութ	86	18	1 188
Չատալջա	899	996	842
Դեյր էլ-Զոր	83	60	67
Սիրիա	199	360	413
Սալոնիկ	201	637	-
Ստամբուլ քաղաք	***150 529***	***59 963***	***72 962***
Հորդանան	939	706	1 310
Մոնաստիր	29	8	-
Սուսուլ	45	45	-
Զեզայիրի Բահրի		131	-
Իշկոդրա	-	6	-
Տրաբլուսգրաբ		60	-
Քալե-ի Սուլթանիե			2 474
Ստամբուլի գավառներ	***148 590***	***1 736***	-
Կաթոլիկ հայեր		***89 040***	***67 838***
Ընդամենը, ըստ հեղինակային խմբի	**1 148 201**	**1 120 747**	**1 225 097**

Փաստորեն, եթե վստահենք օսմանյան վիճակագրությանը, կայսրության նահանգներում տարեցտարի գրանցվել են հայ բնակչության թվի կտրուկ տատանումներ. օրինակ, 1910/11-թթ. և 1914թ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում Կոստանդնուպոլսի հայ բնակչությունն աճել է 21,7*, Դիարբեքիրինը՝ 28,2, Բիթլիսինը՝ 27,1 Երզրումինն ու Վանինը՝ համապատասխանաբար 15 և 14.2 տոկոսով: Միևնույն ժամանակ Անկարայի վիլայեթի հայ բնակչության թիվը նվազել է կիսով չափ՝ 50.4 տոկոսով, Հալեպը՝ 45,5, Տրապիզոնը՝ 25, Բուրսան և Էդիրնեն (Ադրիանապոլիս)՝ համարյա 24 տոկոսով:

Նվազել է նաև կաթոլիկ հայերի թիվը՝ 23.8 տոկոսով: Որոշ տարածաշրջանների բնակչության թվում թուրքական վիճակագրությունը անակնկալ կերպով բացահայտում է 50 հազարից ավելի հայերի գոյությունը: Վիճակագրական ցուցանիշների այսօրինակ տատանումները հաշվարկների ճշգրտության առումով առավել քան անհամոզիչ են, եթե հաշվի առնենք, որ հայ բնակչության ընդհանուր թվի աճը 1910/11թթ. 1914թ. նկատմամբ կազմել է ընդամենը 9.31 տոկոս: «Նկարելով» հայ բնակչության թվի աճ, ուսումնասիրողները գիտակցությամբ աչքաթող են առել նահանգային վիճակագրությունը:

Ժխտողականության այս ածպարարությունը հեղինակային խումբը որդեգրել է դեռևս սուլթանական քարոզչամեքենայի կողմից կիրառվող վիճակագրական ցուցանիշների նենգափոխման մեթոդներից. շատ չփոփոխելով նահանգի բնակչության ընդհանուր թիվը, վիլայեթի նվազեցված հայերի փոխարեն հավելվել է նույնքան մահմեդական: Սուլթանական կառավարության այս գործելակերպի մասին է խոսում նաև Գրիգոր Զոհրապը, որը 1913թ. Փարիզում Մարսել Լեար կեղծանունով հրատարակել է «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի ներքո» աշխատությունը

* Այժմ և հետայսու վիճակագրական ցուցանիշները ներկայացվում են աննշան կլորացմամբ:

նը, որտեղ առկա են ուշագրավ տվյալներ Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվի մասին: Զոհրապը գրում է. «Ներկայումս հայերի ամբողջական թիվը (Օսմանյան կայսրությունում- *Ա. Ա.*) 2 100 000 է, որից 1 018 000-ը բուն Հայաստանում: Օսմանյան կայսրությունը իջեցնում է այդ թիվը մինչև 1 100 000՝ պնդելով, որ Թուրքահայաստանում բնակվում է ընդամենը 600 000 հայ»:[50]

Հետագա շարադրանքում Զոհրապն ապացուցում է, որ 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո, օսմանյան կառավարությունը դիմել է գերիմենդերինգի քաղաքականությանը, որպեսզի Արևմտյան Հայաստանի վիլայեթներից և ոչ մեկում հայերը մեծամասնություն չկազմեն: Ի դեպ, համանման մեթոդներ են կիրառվել նաև մյուս էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ:

Արհեստական վարչական բաժանման վկայությունն է նաև այն փաստը, որ Արևմտահայաստանի վիլայեթներն իրենց չափերով նկատելիորեն զիջում էին կայսրության մյուս գավառների չափերին. «Թուրքիայի անատոլիական վիլայեթների միջին չափը 100 000 քառակուսի կիլոմետր է, այսպիսով Բասրայի տարածքը 138 000 ք/կմ է, Բաղդադինը՝ 141 000 ք/կմ, Մոսուլինը՝ 91 000 ք/կմ: Իսկ այժմ նորաստեղծ գավառների տարածքը հազիվ կազմում է 35 000 ք/կմ. Բիթլիս՝ 29 000 ք/կմ, Մամուրեթ-ուլ-Ազիզ՝ 37 000ք/կմ, Վան՝ 47 000 ք/կմ»:[51]

Զոհրապը քողազերծում է ժողովրդագրական տվյալների կեղծման հետևյալ օրինակը. «1880թ. երբ Հայկական

[50] Армянский Вопрос в Свете Документов, из Р. Авакян, Памятники Армянского Права, Ереван, 2000, стр. 845.
[51] Армянский Вопрос в Свете Документов..., стр. 845.

հարցը օրակարգում էր, թուրքական կառավարությունը հրապարակեց վիճակագրական տվյալներ, ըստ որոնց հայերը կազմում էին փոքրամասնություն ինչպես Թուրքահայաստանում, այնպես էլ Կիլիկիայում: Այդ տվյալների համաձայն, Հալեպի, Ադանայի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի Դիարբեքիրի, Մամուրեթ-ուլ-Ազիզի և Սվազի նահանգներում բնակվում էր ընդամենը 4 629 375 մարդ, որից
մահմեդականներ-3 619 624
հայեր-723 750
այլ քրիստոնյաներ- 283 000:

Անգլիայի հյուպատոս Տրոթերը, վկայակոչելով այս թվերը, իր կողմից ավելացրել է 25 հայ յուրաքանչյուր հարյուրակի նկատմամբ»:[52]

Զոհրապը նշում է նաև, որ իր իսկ հաշվարկած 2 100 000 հայ բնակչության թիվը նույնպես համարում է բավական նվազեցված: Ներկայացնելով պատրիարքարանի վիճակագրությունը՝ նա արձանագրում է, որ Թուրքահայաստանում հայերը կազմում են բնակչության 39 տոկոսը, մինչդեռ թուրքերը՝ 25, իսկ քրդերը այլազգիների հետ միասին՝ 24.5 տոկոսը:[53]

Օսմանյան վիճակագրական տվյալների «ձեռնածությանը» հաջորդում են զանազան դիվանագիտական աղբյուրների գնահատականները, որոնց միջոցով հեղինակային խումբը փորձում է տպավորություն ստեղծել, թե անգամ օտար աղբյուրներում հայ բնակչությունը հազիվ հասնում է 1 600 000-ի: Ընդսմին, տվյալները ներկայացված են խայ-

[52] Армянский Вопрос в Свете Документов... стр. 845.
[53] Նույն տեղում, էջ 847:

տառակ ցաքուցրիվությամբ և ժամանակագրական անընդունելի ընդմիջումներով:[54]

Ուշագրավ է, որ թուրք հետազոտողների աշխատությունում տեղ են գտել նաև Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալները, որոնք ներկայացված են չհամակարգված և շահարկվում են որպես գերագնահատված ցուցանիշներ. իբր պատրիարքարանը հետապնդել է քաղաքական նպատակներ՝ պաշտպանելու Բեռլինի կոնգրեսում հայերի կողմից շրջանառության մեջ դրված թեզերը:[55]

Պատրիարքարանի վիճակագրությունը համադրելու համար հեղինակներն օգտագործել են տարբեր աղբյուրներ, ինչը վիճակագրական մեթոդաբանության առումով այնքան էլ ընդունելի չէ: Պատրիարքարանի հաշվարկը ներկայացնելու համար 1912թ. տվյալների դեպքում հիմք են ընդունվել Մարսել Լեարի (Գր. Զոհրապ) աշխատության ցուցանիշները, որոնք վերահրատարակվել են նաև Զ. Բրայսի և Ա. Թոյնբիի հեղինակած «Կապույտ գրքում», իսկ 1913թ. տվյալների ներկայացման համար օգտագործվել են 1992թ. Ռ. Գևորգյանի և Փ. Փաբուջյանի աշխատությունից և հայտնի թուրքոֆիլ ժողովրդագիր Զասթին Մքքարթիի՝ 2002թ. Ստամբուլում հրապարակված տվյալները:[56] Հարկ է փաստել, որ թուրք հետազոտողները չեն խորշում դեռևս

[54] H. Özdemir [ve baş], ss. 17-22.
[55] H. Özdemir [ve baş], ss. 21-22.
[56] Թուրք պատմաբանների աշխատությունում հղված են համապատասխանաբար Raymond H. Kevorkian et P. Paboujian, Les Armeniens dans L'Empire Ottoman a la veille du genocide (Paris, 1992) ¨ J. McCarthy, Population History of the Middle East and Balkans (Istambul, Isis Press, 2002).

անցյալ դարասկզբին իրենց սպառած մեթոդներից՝ իրար խառնելով նահանգների ու քաղաքների վիճակագրությունը:

Ցուցանիշների այս խառնավաքի արդյունքում ներկայացվել է հետևյալ պատկերը.

Վիլայեթ	*1882*	*1912*	*1913*
1	2	3	4
Ադանա(Կիլիկիա)	280 000	407 000	119 414
Անկարա, Կոնիա և Կաստամոնու	120 000	-	170 068
Այդընի (Իզմիր)	50 000	-	21 145
Բիթլիս	250 000	180 000	218 404
Բուրսա	60 000	-	118 992
Դիարբեքիր	150 000	105 000	106 867
Էդիրնե	50.000	-	30.316
Էրզրում	280 000	215 000	202 391
Հալեպ	100 000	-	189 565
Ստամբուլ և շրջակայքը	135 000	-	163 670
Իզմիթ (սանջակ)	65 000	-	61 675
Մամուրեթ-ուլ-Ազիզ	270 000	168 000	124 289
Խվազ	280 000	165 000	204 472
Սիրիա, Մոսուլ, Բաղդադ, Բեյրութ, Բասրա	40 000	-	-
Տրապիզոն	120 000	-	73 395
Վան	400 000	185 000	110 897
Այլ	10 000	675 000	-
Ընդամենը	2 660 000	2 100 000	1 915 651

Թուրք պատմաբանները փորձում են մոլորության մեջ գցել ընթերցողին, ներկայացնելով կայսրության միայն

հայ բնակչության քանակի մասին տարաբնույթ թվեր: Հարկ ենք համարում շեշտել, որ վիճակագրական տվյալների բաղդատման համար չափազանց կարևոր է ներկայացվող ցուցանիշների արտացոլած միտումների ուսումնասիրությունը, ինչը հնարավորություն է տալիս քննել այս կամ այն ժամանակագրական շարքի արժանահավատությունը: Հայոց պատրիարքարանի տվյալների և թուրքական պաշտոնական վիճակագրության ցուցանիշները համեմատելիս հարց է ծագում, թե ինչու 1910/11-ից 1914թ. հայերի շուրջ 10 տոկոս աճ «նկարող» պաշտոնական վիճակագրության միտումը հակասում է հայոց եկեղեցական առաջնորդարանի տվյալներում արտացոլված հայ բնակչության թվի նվազման ընթացքին: Այս մասին թուրք հեղինակները, իհարկե, լռում են, փոխարենը հաճույքով շեշտում են այն, որ հայոց պատրիարքարանի ցուցանիշները հաշվի չեն առել հայկական վիլայեթների՝ մահմեդականներով բնակեցված տարածքները: Այս հարցին, ի դեպ, առաջինն անդրադարձել է հենց պատրիարքարանը՝ նշելով, որ չի հաշվարկելու այն տարածաշրջանները, որոնք պատմական Հայաստանի մաս չեն կազմել:[57] Կ. Պոլսի եկեղեցական ատյանի կողմից չեն հաշվարկվել Վանի վիլայեթի Հաքքիարի գավառը, Բիթլիսի վիլայեթի Շիիրտի շրջանը, Դիարբեքիրի վիլայեթի հարավային շրջանները, Մամուրեթ-ուլ-Ազիզի հարավային շրջանները, Սվազի վիլայեթի արևմուտքն ու հյուսիս-արևմուտքը: Ի տարբերություն թուրք պատմաբանների, որոնք հաշվարկների համադրման մեջ օգտագործում են տարբեր աղբյուրներում ներկայացվող թվեր, հայկական

[57] J. Bryce and A. Toynbee: The Tretament of Armenians in the Ottoman Empire, Princeton, 2000, Appindix D., p. 657.

պատրիարքարանը սեփական գնահատական տալիս պարզաբանել է իր հաշվարկների մեթոդաբանությունը:[58]

Ի դեպ՝ թուրք պատմաբանները որևէ ակնարկ անգամ չեն անում Օսմանյան կայսրության ժողովրդագրական պատկերը մեծապես փոխած 1895-96թթ. համիդյան ջարդերի մասին, որոնք խլեցին 300 000 հայի կյանք, տասնյակ հազարավորների էլ ստիպեցին լքել պատմական հայրենիքը:

Հեղինակային խումբը մեջբերում է նաև նախկին պատրիարք Օրմանյանի այն տվյալը, որ կայսրությունում բնակվում էր 1 887 900 հայ: Հատկանշական է, որ որևէ ուղղակի հղում սկզբնաղբյուրին չկա, չի հիշատակվում, թե այդ վիճակագրական տվյալը որ թվականով է թվագրվում: Հիշեցնենք նաև, որ 1894-96թթ. համիդյան ջարդերից հետո պատրիարք Օրմանյանը որդեգրել էր հարմարվողական մոտեցում և անգամ բացասական դիրք էր բռնել հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ:[59] 1912թ. Օրմանյանը, հայազգի այլ գործիչների հետ միասին (թուրքական «Սաբահ» թերթի խմբագիր Տիգրան Քելեկյան, բանկիր Գ. Կյուլպենկյան և այլք), աջակցություն էին հայտնում օսմանյան կառավարության կողմից մշակված հայկական բարենորոգումների կիսատ-պռատ ծրագրին:[60] Նույնիսկ Օրմանյանի ծայրահեղ զգուշավոր ցուցանիշը թուրք հեղինակները որակում են չափազանցված, որն անհրաժեշտ է նվազեցնել: Ամեն դեպքում, առանց որևէ լուրջ հիմնավոր-

[58] H. Özdemir [ve baş], s. 23.

[59] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, հատոր 6, Երևան, 1981, էջ 472:

[60] Նույն տեղում, էջ 523:

ման, հայկական պատրիարքարանի տվյալները նրանք միշտ համարում են գերագնահատված:[61]

Հայոց պատրիարքարանի տվյալներն արժեզրկելու մտադրությամբ մեջբերվում է 1912թ. հունական պատրիարքարանի վիճակագրությունը, որը համեմատվում է 1913թ. հայկական եկեղեցական վիճակագրության հետ: Ավանդույթին հավատարիմ, համեմատությունը նույնպես պարունակում է մեթոդաբանական սխալ: Նախ թուրք պատմաբանները խուսափել են հրապարակել հայ բնակչության ամբողջական թվի վերաբերյալ հունական եկեղեցու վկայությունները և վիլայեթների տվյալները ներկայացրել են ընտրողաբար:

Երկրորդ, հունական պատրիարքարանը հաշվարկները կատարել է սեփական աշխարհագրական չափումով, որը, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը չի համընկել հայկական պատրիարքարանի չափման միավորի հետ: Երրորդ, հետազոտողներն ընկել են «ուրիշի համար փորած փոսը», քանզի նշված վիլայեթների վիճակագրության բազմակողմանի ներկայացման դեպքում երևում է թուրքական մարդահամարի ոչ արժանահավատությունը:

Ստորև ներկայացնում ենք աշխատությունում նշված որոշ վիճակագրական աղբյուրների ցուցանիշների համեմատական վերլուծությունը, որն անգամ թուրք պատմաբանների որդեգրած անհամադրելի տվյալների համադրման սկզբունքը կիրառելիս, խոսում է ի վնաս թուրքերի:[62]

[61] H. Özdemir [ve baş], s. 26.
[62] H. Özdemir [ve baş], ss. 26-28.

	Հունական պատրիարքարան (1912)	Օսմանյան վիճակագրություն (1914)	Հայկական պատրիարքարան (1913)	Անգլիական վիճակագրություն (1919)
1	2	3	4	5
Ստամբուլ (Ասիական մաս)	35 360	-	-	-
Իզմիթ	48 635	57 789	61675	57 000
Այդին	16 490	20 766	21145	27 000
Բուրսա	89 966	61 191	118992	75 000
Կոնիա	9 729	13 225	170068	17 000
Անկարա	98 798	53 957		75 000
Կաստամոնու	3 205	8 959		11 000
Տրապիզոն	50 624	40 237	73395	33 000
Սվազ	*170 635*	*151 674*	*204472*	*200 000*
Ադանա	83 000	57 686	119414	75 000
Բիգա (Չանակկալե)	2 336	-	-	-
Ընդամենը	**608 778**	**465 484**	**769161**	**570 000**

Թուրք պատմաբանների աշխատությունում տեղ են գտել նաև որոշ օտարերկրյա դիվանագիտական աղբյուրներում ներկայացված տվյալներ: Եթե վիճակագրական ցուցանիշը չի համապատասխանել գրքի «փիլիսոփայությանը», այսինքն՝ ոչ մի կերպ չի հարմարվել թուրքերի թվանկարչությանը, ապա հեղինակային խումբը պիտակավորել է որպես ոչ արժանահավատ:

Նույնպիսի քմահաճ վերաբերմունքը կարող էին արժանացնել նաև 1919թ. անգլիական վիճակագրությանը.

* Այժմ և հետայսու՝ ցուցանիշը բացակայում է:

ի դեպ, նրանք դիտավորյալ խուսափել են ներկայացնել անգլիական տվյալները Կոստանդնուպոլսի, Ադրիանապոլսի (Էդիրնե), Սիրիայի և Դեյր-էլ-Զորի վիլայեթների վերաբերյալ.[63] Այս առումով հատկանշական է անգլիացիների կողմից մեջբերվող հայկական և սիրիական օգնության կոմիտեների հինգերորդ տեղեկագրում նշվող վիճակագրական գնահատականը, համաձայն որի «Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի հայ բնակչության թիվը հավանաբար 150 000 է»: [64]

Անգամ առանց այդ ցուցանիշների՝ անգլիական և թուրքական վիճակագրական տվյալների տարբերությունը ավելի քան 23 տոկոս է (1 294 851-ը 1 602 000-ի նկատմամբ), ընդսմին, եթե թուրքերի հաշվարկներում չօգտագործվի անգլիական աղբյուրում բացակայող նահանգների թվերը, ապա երկու վիճակագրությունների տարբերությունը կհասնի 26,2 տոկոսի:[65]

Ի դեպ, անգլիական աղբյուրները վկայակոչում են կայսրությունում հայ բնակչության՝ վիճակագրական հաշվարկների առումով սեփական ծայրաստիճան կոպիտ ու մոտավոր գնահատականը, որը հաշվարկվել է օսմանյան պաշտոնական վիճակագրության և հայկական պատրիարքարանի տվյալների միջին թվաբանականով, իբրև «այդ պայմաններում ամենաչեզոք ձևը»[66]: Նշվում է նաև, որ «վերցնելով 1 600 000 *պայմանական* (ընդգծումը մերն է - *Ա.Ա.*) թիվը, պիտի հաշվի առնենք, որ հայ բնակչության իրական թիվը առաջինի և 2 000 000-ի արանքում է, և հա-

[63] H. Özdemir [ve baş], ss. 27-29.
[64] J. Bryce and A. Toynbee. Նշվ. աշխ., Appindix E., p. 660.
[65] H. Özdemir [ve baş], ss., 27-29.
[66] J. Bryce and A. Toynbee. Նշվ. աշխ., p. 645.

վանաբար շատ ավելի մոտ է վերջինին»:[67] Փաստորեն անգամ բրիտանական դիվանագիտական աղբյուրները, որոնք հայկական պատրիարքարանի տվյալների նկատմամբ դրսևորում էին ծայրաստիճան քննադատական են, հայերի թիվը հաշվում են մոտ երկու միլիոն:

Թուրք ուսումնասիրողներն այնքան են տարվել հայ բնակչության թիվը նվազեցնելու մարմաջով, որ հավանաբար շփոթմունքի մեջ մեջբերել են նաև ամերիկյան վիճակագրական տվյալներ, որոնք, իբր, պիտի արժեզրկեին հայկական փաստերը:

Աշխատության առաջին գլխում ներկայացնելով միայն մեկ ամերիկյան փաստաթուղթ՝ Դեյվիդ Մեգիի «Անատոլիայում հայ բնակչության թիվը» զեկուցագիրը, թուրքերը նախապես հավաստում են հիշյալ սկզբնաղբյուրի նկատմամբ իրենց վստահությունը: Նշենք, որ Օսմանյան կայսրության ժողովրդագրական պատկերը ներկայացնող զեկույցի հեղինակի համար հայ բնակչության թվի հաշվարկների մեթոդաբանական հիմքը կազմել է պատրիարք Օրմանյանի ցուցանիշի 15 տոկոսով նվազեցումը:[68] Ամեն դեպքում Մեգիի վիճակագրությունը փաստում է, որ հայկական վեց վիլայեթներում 1915թ. ապրում էր շուրջ մեկ միլիոն հայ:[69] Մեգին գավառների կտրվածքով կարողացել է տվյալներ ներկայացնել միայն Սվազի, Տրապիզոնի և Զանիկի նահանգների վերաբերյալ:[70]

Վիճակագրության հանդեպ հեղինակային խմբի ծայ-

[67] J. Bryce and A. Toynbee. Նշվ. աշխ., p. 645.
[68] H. Özdemir [ve baş], s. 32.
[69] Ibid, ss. 33-34.
[70] Ibid, s. 30.

ռահեղ անպատասխանատվությունը տեղ է գտել հենց Մեգիի հաշվարկի հիման վրա կազմված աղյուսակում, որտեղ անհասկանալի տրամաբանությամբ Դիարբեքիրի նահանգի ողջ բնակչությունը հաշվարկվել է 1 027 000 մարդ, այն դեպքում, երբ թվաբանական տարրական գործողությամբ պիտի ստացվեր 560 000:[71]

Թուրք պատմաբաններն անդրադառնում են Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակին վերաբերող այլ արևմտյան աղբյուրների ևս: Նկատենք, սակայն, որ արևմտյան ուսումնասիրողները, որոնք ճամփորդում էին Թուրքահայաստանով, ոչ հնարավորություն և ոչ էլ նպատակ ունեին կատարել խորը հետազոտություն: Որպես հիմք ընդունելով տեղական սալնամեների վիճակագրական աղյուսակները, նրանք սահմանափակվում էին դրանց մասնակի սրբագրումով՝ ճամփորդության ընթացքում հավաքած կցկտուր տվյալներին և անձնական տպավորություններին համապատասխան: Մասնավորապես, Գյուրունի կարծիքով արևմտյան հեղինակներից հարցը «առավել հիմնովին ուսումնասիրած» անգլիացի Լինչի և ֆրանսիացի Քինեի թվերը, համապատասխանաբար 1 058 000՝ 1896թ. (Թուրքահայաստանի համար) և 1 181 066՝ 1892թ. (Ասիական Թուրքիա), կրում են թուրքական պաշտոնական վիճակագրության ճնշող ազդեցությունը: Ինքը՝ Լինչը, նշում է, որ Էրզրումի, Բիթլիսի և մասամբ Վանի վիլայեթների վիճակագրական աղյուսակները կազմելիս թվերը քաղել է օսմանյան պաշտոնական տվյալներից և թերհաշվառման սխալները շտկելու համար հարկավոր է մեծ տոկոս:

[71] H. Özdemir [ve baş], s. 18-21.

Ինչ վերաբերում է 19-րդ դարավերջի Օսմանյան վիճակագրության ամենահայտնի ուսումնասիրողի համբավը վայելող Վիտալ Քինեի տեղեկություններին, որոնք նույնպես տեղ են գտել աշխատությունում,[72] դրանք ևս չունեն ինքնուրույն աղբյուրագիտական նշանակություն: Քինեն, ինչպես և «առավել արժանահավատ» այլ եվրոպական հեղինակներ «իրենց աշխատությունները հիմնում էին Օսմանյան պաշտոնական տվյալների վրա»: Փորձելով ստեղծել արժանահավատության պատրանք, Քինեն սուր քննադատության է ենթարկում իր իսկ օգտագործած թուրքական վիճակագրությունը՝ պարզաբանելով, որ «Մարդահամարի այնքան օգտակար և հետաքրքրական գիտությունը ոչ միայն մուտք չի գործել Թուրքիայի սովորությունների ու բարքերի մեջ, այլև իշխանությունները գիտակցաբար մերժում են այն: Բուն պաշտոնական մարդահամարը բացարձակապես թերի է Թուրքիայում»:[73] Սփյուռքահայ պատմաբան Սարգիս Կարաջյանի հաշվումներով Քինեյի տվյալները 50-60 տոկոսովով նվազ են իրական թվերից:[74]

Հեղինակային խումբը օգտագործած աղբյուրների թվում նշում է Լևոն Մարաշլայանի «Քաղաքականություն և ժողովրդագրություն: Հայերը, թուրքերը և քրդերը Օսմանյան կայսրությունում» աշխատությունը, որին հետագա շարադրանքում այլևս չեն անդրադառնում՝ փոխարենը շոայ-

[72] Հեղինակների ներկայացրած տվյալների աղյուսակը, տե՛ս H. Özdemir [ve baş], s. 51:
[73] Ռ. Թաթոյան, նշվ. աշխ., էջ 112:
[74] Նույն տեղում, էջ 113:

լորեն մեջբերելով թուրքասեր պատմաբանների վիճակագրական աղյուսակները:

Բազմիցս քննելով և վերաքննելով իրենց հաճո թերարժեք աղբյուրները և ուսումնասիրությունները, թուրք հետազոտողները «մեծահոգաբար» հայերի թիվը համարում են *ավելի, քան 1,5 միլիոնը* (ընդգծումը մերն է - *Ա. Ա.*): Նրանք լիովին անտեսում են այն եվրոպացիների աշխատությունները, որոնք ներկայացնում են Օսմանյան կայսրությունում հայերի իրական թիվը: Օրինակ, պատմական ընկերակցության անդամները երբևէ չեն հիշատակում բելգիացի իրավաբան Ս. Պ. Ռոլեն-Ժեկմենին, որը 1889թ. հայերի մասին հատուկ ուսումնասիրություն է հրատարակել: Ըստ Ռոլեն-Ժեկմենի, հայերի թիվը Թուրքիայում 1845-1877թթ. 2,4 միլիոնից հասել է 3 միլիոնի:[75] Այսպիսի ցուցանիշ է ներկայացնում նաև Ալբերտ Վանդալը, նշելով, որ արևմտահայերը կազմում են մոտ երկու միլիոն, որոնք գլխավորապես բնակվում են կայսրության արևելյան նահանգներում:[76]

Թուրք պատմագրության նորօրյա աստղերը չեն հիշատակում նաև 1922թ. Թեոդիկի հրապարակած տեղեկությունն այն մասին, որ առաջին աշխարհամարտից առաջ Օսմանյան կայսրությունում բնակվում էր 2 026 700 հայ:

[75] М. П. Роллен- Жекмен, Армения, армяне и трактаты, М., 1896. Տե՛ս նաև Ա. Համբարյան, նշվ. աշխ.:

[76] А. Вандал. Армения и армянские реформы, Петербург. 1980, стр. 6. Տե՛ս նաև Ա. Համբարյան, նշվ. աշխ.:

Հայ բնակչությունը Օսմանյան կայսրությունում, ըստ Թեոդիկի «Ամենուն տարեցույցի»[77]

Վիլայեթներ	*պատերազմից առաջ*	*պատերազմից հետո*
1	2	3
Սվազ	225 000	16 800
Էրզրում	215 000	1 500
Խարբերդ	204 000	35 000
Դիարբեքիր	124 000	3 000
Բիթլիս	198 000	56 000
Վան	197 000	500
Կիլիկիա	205 000	182 000
Տրապիզոն	65 000	15 000
Կ.Պոլիս	150 000	150 000
Իզմիր	72 500	20 000
Էդիրնե	27 500	7 000
Խուդավենդիգար	78 000	28 300
Այդին	11 000	11 000
Կաստամոնու	10 000	8 000
Անկարա	115 000	9 500
Կոնիա	25 000	10 000
Երուսաղեմ	2 500	2 500
Բեյրութ	600	1 000
Բաղդադ	1 000	16 000
Բասրա	400	400
Մոսուլ	800	800
Դամասկոս	400	400
Հալեպ	99 000	73 000
Ընդամենը	***2 026 700***	***592 200***

[77] Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», ԺԶ տարի, 1922, էջ 261-263:

Փաստենք, որ հեղինակները ծանոթ չեն Ա. Համբարյանի՝ դեռևս 1969թ. հրատարակված ուշագրավ աշխատությանը, որտեղ ժողովրդագրական լուրջ հաշվարկներով (հիմնված 1845թ. մարդահամարի և բնական աճի 0.7% գործակցի վրա, հաշվի առնելով արտագաղթն ու թուրքական իշխանությունների կողմից պարբերաբար իրականացված ջարդերը), ապացուցվում է, որ 1914թ. արևմտահայերի թիվը կազմել է 2 583 692 մարդ:[78]

Փոխարենը թուրքերը նախընտրում են վիճակագրական տվյալների հարմարեցման ուղին՝ հիմնականում շրջանառելով օսմանյան Թուրքիայի դաշնակիցների դիվանագիտական նախապատերազմական կողմնակալ թվերը:[79] Ի դեպ, առանց լուրջ հիմնավորման գերագնահատված են համարում 1916թ. Կ.Պոլսում գերմանական դեսպանատան այն տվյալը, որ կայսրությունում բնակվել է 2,5 միլիոն հայ:[80]

Երկրորդ գլխում նրանք փորձում են արդարացնել Թուրքիայի հայ բնակչության նկատմամբ երիտթուրքական կառավարության գործողությունները: Եվ կրկին մեջտեղ է հանվում ինքնահնար թեզը, թե սուլթանական, հետագայում նաև երիտթուրքական կառավարություններն արեցին հնարավորը՝ 1878 թ. Բեռլինի պայմանագրով ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու համար: Սակայն, իբր, օգտվելով առաջին աշխարհամարտի թոհուբոհից՝ հայերը, անգամ վեց վիլայեթներում փոքրամասնություն լինելով, ապստամբություն բարձրացրին Թուրքիայի դեմ, ավելին՝ զանգվածաբար լքում էին թուրքական բանակը և միանում ա-

[78] Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 111:
[79] H. Özdemir [ve baş], ss. 18-21.
[80] Ibid, s. 20.

ռաջ շարժվող դաշնակիցներին:[81] Հեղինակների անթաքույց խանդն է հարուցել նաև այն փաստը, որ Ռուսական կայսրության և դաշնակից երկրների տարածքում բնակվող հայերը զորակոչվել են այդ պետությունների բանակներ և ծառայության տարվել Օսմանյան կայսրության դեմ:[82] Մոռացության է տրվում, որ հայերը զորակոչվել են նաև օսմանյան, գերմանական և ավստրո-հունգարական բանակներ, և որ հենց թուրքական բանակում հայ զինվորականությունը ամբողջովին կոտորվեց բանվորական ջոկատներում: Սակայն այդ մասին՝ ստորև:

Հեղինակային խմբի աշխատանքն այնպիսի տպավորություն է թողնում, որ երկրորդ գլխում խտացված են Յուսուֆ Հալաչօղլուի բոլոր նախկին հրապարակումները, որոնց հիմքում վիճակագրական տվյալները սոսկ. «հայկական անհնազանդության» անհիմն պնդումն ապացուցելու ծխածածկույթ են: Այդ գերխնդիրն ակներև է դառնում հպանցիկ դիտարկելով ընդհանուր տեղեկություններ պարունակող աշխատությունների ցանկը, ուր տեղ են գտել միայն պատմությունը միակողմանիորեն ներկայացնող գրքերը:[83]

Գլխի ներածականում վկայակոչվում են պատմական ճշմարտությունը ծուռ հայելու մեջ արտացոլող այն փաս-

[81] H. Özdemir [ve baş], ss. 53-57.
[82] Ibid, ss. 57-67.
[83] Թուրք հեղինակներն ընթերցողի ուշադրությունն են հրավիրում Հայոց ցեղասպանությունը նենգափոխող հետևյալ աշխատություններին՝ C. Küçük, Osmanlı Diplomasinde Ermeni Meselesi' nin Ortaya Çıkşı (1878-1897), İkinci Baskı, Türk Dünyası Araştırmaları Vakfı, İstambul, 1986; A. Karaca, Anadolu Islahtı ve Ahmet Şakir Paşa (1838-1899), İstambul, 1993; M. Şaşmaz, British Policy and the Application of Reforms of the Armenians in Esatern Anatolia 1877- 1897, Türk Trih Kurumu, Ankara, 2000.

տաքղթերը, ըստ որոնց, իբր, հայերը դավաճանաբար անցել են ռուսների կողմը:[84] Նման մեղադրանք հայերի հանդեպ հնչեցնում է Յու. Հալաչօղլուն, նշելով, որ Վանում և Զեյթունում հայերի իրականացված «մահմեդականների կոտորածներից» հետո, օսմանյան կառավարությանը ոչինչ չէր մնում, քան վճռական քայլերի անցնելը:[85] Միևնույն ժամանակ Հալաչօղլուն ստիպված է ընդունել, որ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը հայերի նկատմամբ իր գործողություններում եղել է միանձնյա նախաձեռնող և սկզբնական շրջանում գործել է առանց կառավարության ու խորհրդարանի թույլտվության: Թալեաթին արդարացնելու համար Հալաչօղլուն առանց փաստարկման պնդում է, որ հայերը համագործակցել են ռուսների հետ:

Թուրք հեղինակները նշում են, որ մեծ թվով հայեր պատերազմին մասնակցել են Անտանտի կողմից, օրինակ, ռուսական բանակում: Նրանց հավանաբար մոռանում են, որ նույն ժամանակ Ռուսական կայսրությունում զորակոչվել էր 250 հազար հայ՝ կամ կայսրության հայ բնակչության 2 540 000-ի 13 տոկոսը:[86] Ընդ որում, հիասթափեցնելով թուրք պատմաբաններին, պիտի տեղեկացնենք, որ ռուսական բանակի կազմում գործող կամավորական գնդերում 1915թ. դրությամբ ծառայում էր ընդամենը 6 000 հայ: Թուրքական և ռուսական բանակների հարաբերակցությունը կովկասյան ռազմաճակատում ի վնաս ռուսների էր. 350 000 թուրքի դեմ կանգնած էր 200 000 ռուս զինվոր: Բնակա-

[84] H. Özdemir [ve baş], ss. 53-66

[85] Y. Halaçoğlu, Realities Behind the Relocation, from Armenians in the..., p. 109.

[86] Հայ ժողովրդի պատմություն, նշվ. աշխ., էջ 548:

նաբար հարց է ծագում, թե ի՞նչ ծավալի ապստամբությունից էին սարսափում թուրքերը, եթե հայերն այդքան սակավաթիվ էին: Ասենք, որ թուրք պատմագրության կողմից ապստամբություն որակվող Վանի ինքնապաշտպանությանը մասնակցել են քաղաքը պաշարած զորքերից անհամեմատ քիչ թվով մարդիկ, որոնց կեսն անգամ չի ունեցել մարտական զենք:[87] Վանի փոքրաթիվ պաշտպանների դեմ թուրքերը գործադրեցին գերուժ. քաղաքի երկու հայկական թաղերի վրա, իտալական հյուպատոս Գ. Սբորդոնի վկայությամբ, արձակվել էր 16 000 արկ:[88]

Ինչ վերաբերում է կազմակերպված ապստամբություններին, ապա նույն թուրքական հրամանատարությունն էր հաշվարկել, որ օսմանյան բանակի հաջող առաջխաղացման դեպքում, խժդժություն բռնկվելու էր Կովկասի մահմեդականներով բնակեցված վայրերում: Ռուսաստանի հարավում անհնազանդության գաղափարական նախապատրաստության համար սուլթանն անգամ «անհավատների» դեմ ջիհադի՝ «սրբազան պատերազմի» կոչ էր արել: Զորավար Քյազըմ Կարաբեքիրն իր հուշերում գրում է, որ չնայած սրբազան պատերազմի կոչերին, «ապստամբությունը, որի հույսն ունեինք, չէր բռնկվում»:[89]

Տեղահանության մասին փաստաթղթերի վերլուծության մեթոդաբանական բացերից մեկն էլ այն է, որ թուրք

[87] H .Dasnabedian, History of the Armenian Revolutionary Federation Dashnaktsutyun (1890/1924), Milan, 1990, p, 111:

[88] Վանի իտալական հյուպատոսական գործակալը՝ Պետրոգրադի իտալական դեսպանին, 31 մայիսի 1915թ. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 1991, էջ 344-348:

[89] K. Karabekir, Cihan harbinde neden girdik, nasıl idare ettik? Kit. I. İstambul, 1938, s. 490.

պատմաբանները չեն նշում օսմանյան բանակ զորակոչված հայ բնակչության վիճակագրական որևէ ցուցանիշ: Փաստորեն տեղահանությունը չի ներառում զինվորական ծառայության կանչված անձանց: 1914թ. օգոստոսի 2-3-ին, քաջալերվելով գերմանական ռազմական աջակցությամբ, Թուրքիան հայտարարեց համընդհանուր զորահավաք, ապա որդեգրեց «զինված չեզոքության» քաղաքականությունը: Գործող բանակ զորակոչվեցին նաև հայերը: Նրանց զորակոչն ընթանում էր հետևյալ սխեմայով. նախ ծառայության կանչվեց 20-45 տարիքային խումբը, հետո՝ 15-20, և վերջում՝ 45-60 տարեկանները:[90] Հայ զինվորականությունը մեծամասամբ զինաթափ արվեց և աշխատանքային գումարտակներում դաժան շահագործման ենթարկվելուց հետո ոչնչացվեց:[91]

Ընդհանուր առմամբ, ըստ Ջ. Կիրակոսյանի, օսմանյան բանակ է հավաքագրվել և ոչնչացվել առնվազն 50-60 հազար հայ, զորակոչի առաջին փուլի համար մոտավորապես նույն ցուցանիշն է հաղորդում նաև Գրիգորիս վարդապետ Պալաքյանը:[92]

[90] V. N.Dadrian, The Histroy oh the Armenian Genocide: Etnic conflict from the Balkans to Anatolia and the Caucasus, 1997, Oxford, pp. 220-221.

[91] Ըստ որոշ գնահատականների, ոչնչացված հայ զինվորականության թիվը հասնում է 200000-ի: Այս առումով, կարծում ենք տեղին է նշել Հ. Ջատիկյանի այն տեսակետը, որ Օսմանյան կայսրությունում 1915թ. բնակվում էր շուրջ 4 միլիոն հայ, որից շուրջ 2 միլիոնը՝ հայկական վեց վիլայեթներում: Տե՛ս Հ. Ջատիկյան, Կարինի նահանգի հայ բնակչության, արևմտահայության, 1894-1896թթ կոտորածների, Մեծ եղեռնի զոհերի թվաքանակի հարցի շուրջ, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, N9, Երևան, 2004, էջ 148-149:

[92] Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 230, ինչպես նաև՝ Գրիգորիս Ծ. վարդապետ Պալաքյան: Հայ գողգոթան, Երևան, 1991, էջ 63:

Օսմանյան բանակ զորակոչված հայերի թիվը, ըստ հայտնի թուրքագետ Հ. Ինջիկյանի, վերջնահաշվում կազմել է 200 000:[93] Չնայած թուրքական բանակում հայ զինվորների հանդեպ անմարդկային վերաբերմունքին, հայ նորակոչիկների շրջանում դասալիքների թիվը, անգամ, ըստ Վանի արյունարբու նահանգապետ Ջևդեթ բեյի, շատ սահմանափակ էր: Այլ աղբյուրներ նշում են, որ հինգ փախչող թուրքին մի հայ հազիվ էր ընկնում:[94] Այդուհանդերձ, ռազմական պարտությունների մեղքը թուրքերը բարդում էին հայերի վրա: Հայ զինվորականության նկատմամբ կանխակալ անվստահության պատճառով հայերը Կովկասից տեղափոխվում էին թիկունքային և ճանապարհաշինական աշխատանքների, զինաթափ էին արվում, կամ ուղարկվում Սիրիա՝ անգլիացիների դեմ կռվելու:[95] Ավստրո-հունգարական արխիվային փաստաթղթերից մեկը քողազերծում է հայ զինվորականության հանդեպ թուրքական հրամանատարության բացահայտ անտարբեր վերաբերմունքը, քանզի թուրքերը «շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում

[93] О. Г. Инджикян, Социальная психология геноцида, Ереван, 1995, стр. 49.

[94] Ավելի հանգամանալի տե՛ս Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 224-227:

[95] Հայ զինվորականության զանգվածային ոչնչացման մեջ կարևոր դեր է խաղացել օսմանյան բանակի բարձրագույն հրամանատարությունը: Թուրք լեզվաբանության ապագա հիմնադիրներից Հակոբ Դիլաչարը միայն բախտի քմահաճույքով է խույս տվել գնդակահարությունից: Ի դեպ, դավաճանության մեղադրանքով Դիլաչարին մահապատժի պիտի դատապարտեր Թուրքիայի ապագա առաջին նախագահ Մուստաֆա Քեմալը: Տե՛ս Ծ. Աղայան, Հայերը Թուրքիայում, Երևան, 1994, էջ 55-56:

էին ռազմաճակատի առաջին գիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն»:[96]

Հեղինակները ճգնում են համոզել, որ աքսորված հայերի թիվը չի անցել 500 000-ից, ըստ որում Կովկասում ապաստանել է 350-500 000 հայ, 200 000-ը մահացել է տեղահանության ընթացքում, իսկ օսմանյան սահմաններում մնացել է 400-500 հազարը:[97] Ավելին, նույն Հալաչօղլուն, առանց հաշվի առնելու պատմական իրողությունները, տեղահանությունը ներկայացնում է որպես պարզ տեղափոխություն:

Հեղինակային խումբն ամեն կերպ փորձում է խուսափել գերմանական այն արխիվային փաստաթղթերից, որոնք ապացուցում են Օսմանյան կայսրության լայնածավալ հայաջինջ քաղաքականությունը, ցեղասպանության կազմակերպված ու նպատակային բնույթը: Հընթացս, ջանում են ամեն գնով արդարացնել երիտթուրքերի գերմանամետ կողմնորոշումը, նշելով, որ Եռյակ միությանը Օսմանյան կայսրությունը միացավ սոսկ «կապիտուլյացիաների ռեժիմը վերացնելու համար», մինչդեռ նույն կայսրությունը երկրի ինքնիշխանության կարևորագույն լծակները զիջել էր այլ պետության՝ կայսերական Գերմանիային:[98]

[96] Տե՛ս Ավստրո-հունգարական դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին, փաստաթուղթ թիվ 50, Երևան, 2004, էջ 12, տե՛ս նաև Wien, Haus-Hof-usn Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), XL 272.: Կարծում ենք. առաջին աշխարհամարտի ընթացքում օսմանյան բանակ զորակոչված հայերի թեման առանձին և լուրջ ուսումնասիրության կարիք ունի:

[97] V. N. Dadrian, The Histroy oh the Armenian Genocide, pp. 105-106.

[98] H. Özdemir [ve baş], s. 68.

Առաջին աշխարհամարտի ընթացքում, անգամ Գերմանիայում, չնայած մոլեգնող գրաքննությանը և տեղեկատվական մեկուսացմանը, որոշ անհատներ տեղյակ էին Արևմտյան Հայաստանի արյունալի անցքերին: Հասարակության մի զգալի մասը գիտեր նաև, թե մարդկային ինչ կորուստներ է խլում ծրագրված եղեռնը: Օսմանյան կայսրությունում գործող գերմանական դիվանագիտական հաստատությունները պարբերաբար տեղեկատվություն էին հաղորդում Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Օրինակ, 1915թ. դեկտեմբերի 20-ին Հալեպի գերմանական հյուպատոսությունը «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթի երկու հոդվածների առնչությամբ գրում է. «Անհնարաստ է վիճարկել անգլիական կողմի հրապարակած 800 000 սպանված հայերի թիվը»:[99] Բերում են նաև ուշագրավ տվյալներ. «Թուրքիայի հայերի ընդհանուր թիվը կազմում է 2,5 մլն, որոնցից վեց վիլայեթներում (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սվազ)՝ 1 200 000: Վանի նահանգը, որտեղ կար հավանաբար 150 000-300 000 հայ...»:[100]

Համարժեք տեղեկատվություն է պարունակում մեկ այլ գերմանական փաստաթուղթ, որը ներկայացնում է Մուշի ժողովրդագրական պատկերը: Սույն գրությունը Մուշի որբանոցի քույր Ալմա Յոհանսոնը 1915թ. նոյեմբերի 20-ին ուղղել է Կոստանդնուպոլսում Գերմանիայի գլխավոր հյուպատոս Մորդտմանին: Նրա տվյալով «Մուշում կար մոտ

[99] Հայ ժողովրդի տեղահանությունը, Հայոց ցեղասպանությունը գերմանական... Դյոսլերի առարկությունները «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթի երկու հոդվածների առնչությամբ, էջ 122:

[100] Հայ ժողովրդի տեղահանությունը, Հայոց ցեղասպանությունը գերմանական..., էջ 122:

25 000 հայ, Մուշի մեջ են մտնում շուրջ 300 գյուղեր, որոնք գերազանցապես հայկական էին»:[101]

Նույնպիսի փաստեր են հաղորդում նաև գերմանացի այլ միսիոներներ: Գերմանական ավետարանական միսիոներական օգնության տնօրեն Ա. Շրայբերը 1917թ. նոյեմբերի 28-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանն ուղղված հաղորդագրությունում հայերի բռնի տեղահանության մասին գրում է. «Դրանից հետո կարգադրված էր ամբողջովին աքսորել Կիլիկիայի հայ բնակչությանը (ավելի քան 200 000 մարդ):[102]

Նույն աղբյուրը, բացահայտելով երիտթուրքերի ծրագրված քաղաքականությունը, նշում է, որ հայերի տեղահանությունը պատերազմական պայմաններով թելադրված անհրաժեշտություն չէր, քանզի ցեղասպանությունից ապահովագրված չէր նաև Արևմտյան Անատոլիայի հայությունը: Հիշենք, որ ռազմական գործողություններն ընթանում էին Արևմտյան Անատոլիայից զգալի հեռավորության վրա: Գերմանական դիվանագիտական փաստաթղթերը վկայում են, որ այս տարածաշրջանում ապրում էր 300 000 հայ:[103]

Հետաքրքրաշարժ է նաև Մեծ եղեռնի վերապրողների գերմանական վիճակագրությունը. «130-200 հազար հայ դեգերում է Եփրատի ափերին, 150 հազարը՝ Բաղդադի երկաթուղու վրա, 45 հազարը Հալեպի, իսկ 30 հազարը Դամասկոսի մոտակայքում: Շուրջ 200 000 հայեր փրկվեցին ռուսական առաջխաղացման շնորհիվ»:[104]

[101] Ալմա Յոհանսոնի հաղորդումը Հայաստանում 1915թ. կոտորածի մասին, նույն տեղում, էջ 105:
[102] Հայ ժողովրդի տեղահանությունը, Հայոց ցեղասպանությունը գերմանական..., էջ 202:
[103] Հայ ժողովրդի տեղահանությունը, Հայոց ցեղասպանությունը գերմանական..., էջ 202:

Ըստ ամերիկյան տվյալների, 1916թ. ձմռանը միայն Սիրիայում ապաստանել է 500 000 մարդ:[105] Այս տվյալը ամերիկյան հյուպատոսական աշխատակիցները քաղել են տեղեկատվության վստահելի աղբյուրից[106]: Գրքի հեղինակները չեն շրջանցել հայերի քարավանների վրա կատարված հարձակումները, թեև չքմեղանում են, թե այդ բարբարոսական հարձակումների ժամանակ քչերն են զոհվել:

Հետաքրքրական է, որ նույն աղբյուրին հղում անելով՝ նրանք ձգտում են այդ զոհերը ևս ծառայեցնել իրենց նպատակին, իբր մեծաթիվ մարդկանց փոխադրությունն իրականացնելու՝ Օսմանյան կայսրության հաջողության վկայություն: Ժամանակին ցեղասպանությունը ժխտող պատմաբանները նշում էին, որ 1916թ. վերջին 702 900 հայեր «հաջողությամբ վերաբնակեցվել են»:[107] Այս պնդումը հիմնվում էր մի զեկուցագրի վրա, որը ինչպես ապացուցված է, վերաբերում է ոչ թե հայերին, այլ Բալկաններից և Կովկասից Թուրքիա գաղթած մահմեդականներին:[108]

Այն իրողությունը, որ Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թիվը գերազանցում էր 2 միլիոնը, փաստում է նաև Ավստրո-հունգարիայի հյուպատոսն Ադրիանապոլսում: Նա հավաստում է, որ 1915թ. հոկտեմբերի 29-ի դրությամբ

[104] Նույն տեղում:
[105] Տե՛ս հավելված 2:
[106] "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by A. Sarafian, volume 1, the Lower Euphrates, p. 113.
[107] B. Şimşir, ed, Documents, [no date], Ankara, doc 41, pp. 114-24, .
[108] Sarafian Ara, The Ottoman Archives Debate and the Armenian Genocide, Armenian forum 2, no. 1 (Spring 1999), pp. 40-41

«1,5 միլիոն հայեր տեղահանվել են»:[109] Եթե այս ցուցանիշին գումարենք Կոստանդնուպոլսում, Իզմիրում և մի շարք գավառներում մնացած, այլ վայրերում՝ մահմեդականություն ընդունած, ռուսական բանակի առաջխաղացման հետևանքով փրկվածի և օսմանյան բանակում կոտորված հայերի ընդհանուր թվին, պարզ կդառնա, որ հայոց պատրիարքարանի տվյալները հավաստի են:

Հեղինակային խումբը աննախադեպ ազատություն է դրսևորում ամերիկյան դիվանագիտական արխիվի մեկնաբանության հարցում: Կասկած է հարուցում, թե նրանք ամերիկյան դիվաններում իրականացրած աղբյուրագիտական ուսումնասիրության արդյունքում հայտնաբերե՞լ են արդյոք որևէ նոր փաստաթուղթ: Վկայակոչված վավերագրերի մեծ մասը հրապարակված է հայ պատմաբան Արա Սարաֆյանի կազմած ժողովածուներում:[110]

Սակայն թուրքերն իրենց իրավունք են վերապահում աղավաղված կամ մասնակի թարգմանելու ամերիկյան դիվանագետների զեկուցագրերը, որոնք մերկացում են հանցագործությունը. ցանկացած ամերիկյան փաստաթուղթ ամբողջական ընթերցանության դեպքում վեր է հանում վայ պատմաբանների ոչ գիտական միտումնավորությունը:[111]

Իրականում ամերիկյան վավերագրերը ոչ միայն ներկայացնում են հայերի տեղահանության թվային հետևանքները, այլև բացահայտում են իթթիհատականների կազմակերպած հանցագործության մանրամասները:*

1915թ. ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերը կարևոր տվյալներ են պարունակում նաև Օսմանյան կայսրության հայ բնակչության և Հայոց ցեղասպանության զոհերի թվի մասին: Օրինակ, Մամուրեթ-ուլ-Ազիզում, ըստ հյուպատոս Լ. Դևիսի, բնակվում էր 100-150 հազար հայ, մինչդեռ թուրքական պաշտոնական վիճակագրությունը նույն ցուցանիշը հաշվարկում է 76 070:[112]

Նույն թվականի. օգոստոսի 19-ին Հալեպի ԱՄՆ հյուպատոսության Կոստանդնուպոլիս ուղարկած հեռագրի համաձայն, օգոստոսի 15-ի դրությամբ հայ զոհերի թիվը հասնում է 500 000-ի, ըստ որում հյուպատոսարանի նշած կորուստները վերաբերում են միայն Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ-ուլ-Ազիզի, Անգորայի և Սվազի նահանգներին:[113]

Օսմանյան կայսրության կազմակերպած հանցագործության ողջ արնաներկ շառավիղը արտացոլվում է Բաղդադի իրավիճակի մասին Հալեպի հյուպատոսության 1915թ. սեպտեմբերի 29-ին Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին ուղղված զեկուցագրում: Այս փաստաթղթի համաձայն, տեղահանված հայերի միայն 15 տոկոսն էր հասնում կառավարության կողմից նախատեսված

[109] Vahakn N. Dadrian, նշվ. աշխ., էջ 51:
[110] Համեմատության համար տե՛ս "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, vol. I-III:
[111] Համահեղինակների՝ Սարաֆյանից փոխառած նյութերից մեկի ամբողջական թարգմանությունը տե՛ս Հավելված 3:

* Տե՛ս Հավելված 3:
[112] U.S. State Department Record Group 59, 867. 4016/269.
[113] "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, volume 1, the Lower Euphrates, pp. 53-54.

վայրերը, իսկ տեղահանության արդյունքում, մինչև սեպտեմբերի 21-ը, զոհվել է 1 000 000 մարդ:[114]

Հյուպատոսությունը ներկայացնում է նաև որոշ վիլայեթների բողոքական հայերի թիվը նախքան տեղահանությունը: Ըստ զեկուցագրի, այն կազմել է 67000:[115] Իրականում կայսրությունում բողոքական հայերի թիվը եղել է ավելի շատ: Վերջիններիս հաղորդած տվյալներն ունեն արժանահավատության բարձր աստիճան, քանզի, ինչպես վկայում է ամերիկյան մեկ այլ փաստաթուղթ, բողոքականները «լավ կազմակերպություն ունեն... խնամքի վայրերում գումարներ բաժանելու և այլ կարգի օգնություն հասցնելու համար»:[116]

Ամերիկյան դիվանագիտական աղբյուրները վավերական տեղեկություններ են պարունակում նաև նախապատերազմական ժողովրդագրության մասին: Ուրֆայում հայերի թվի վերաբերյալ հետաքրքրական տվյալ է հաղորդում փոխհյուպատոս Սեմյուել Էդելմանը՝ նահանգի 50 000 բնակիչներից 20 000-ը հայ էին, այսինքն՝ հայերը կազմում էին բնակչության 40 տոկոսը:[117] Հիշեցնենք, որ թուրքական վիճակագրությունը Ուրֆայի համար կազմել է ընդամենը 15 000 մարդ՝ կամ շեղումը եղել է 30 տոկոս:

Հալեպի հյուպատոսը շրջանառում է նաև Սեբաստիայի վիլայեթի հայ բնակչության վերաբերյալ 300 000 հայերի տվյալը[118]: Ամերիկյան գլխավոր հյուպատոսությունը Զմյուռնիայում նշում է, որ Օսմանյան կայսրության կողմից պետականորեն ծրագրված հանցավոր արարքները իրականացվել են 2 000 000 հայերի՝ Թուրքիայի ողջ հայ բնակչության դեմ:[119] Ինչպես կայսրությունում հայերի բազմաքանակությունը, այնպես էլ 1915թ. ցեղասպանության զոհերի իրական պատկերն արտացոլող ցանկացած ցուցանիշ հեղինակակին խումբը հակված է պատերազմական քարոզչություն անվանել:[120] Նույնպես պատերազմական քարոզչություն են անվանվում Լեփսիուսի (Գերմանիա), Մորգենթաուի (ԱՄՆ), Բրայսի ու Թոյնբիի (Մեծ Բրիտանիա), աշխատանքները:[121] Այս հայտարարությունը կարող էր լուրջ ընդունվել, եթե օրինակ, Լեփսիուսը չլիներ կայսրության դաշնակից պետության՝ Գերմանիայի քաղաքացի, իսկ Մորգենթաուն՝ չեզոք երկրի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար:

Գրքի հեղինակները կառչած են մնում այն տեսակետին, որ ըստ օսմանյան արխիվային փաստաթղթերի, աքսորված հայերի թիվը կազմել է 422 758՝ հենվելով Հալաչօղլուի աշխատության վրա: Պետք է նշել, որ վերջինիս տվյալները համակարգված չեն (նահանգների, գավառների և քաղաքների տվյալները միախառնված են) և ներկայացվում են կամայական կերպով, ինչի վկայությունն է նրա կազմած աղյուսակը:

[114] "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, volume 1, the Lower Euphrates, pp. 94-104.
[115] Տե՛ս հավելված 1:
[116] "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, volume 1, the Lower Euphrates, p. 112.
[117] Նույն տեղում, էջ 73-76:

[118] Նույն տեղում:
[119] Նույն տեղում, էջ 118.
[120] H. Özdemir [ve baş], s. 95.
[121] H. Özdemir [ve baş], s. 106.

Տեղահանված հայերի թիվը ըստ Հալաչօղլուի «Հայերի տեղահանությունը» աշխատության[122]

	Տեղահանված	Մնացած
1	2	3
Ադանա	14 000	15-16 000
Անկարա (կենտրոն)	21 236	773
Այդընն	250	-
Բիրեջեք	1 200	-
Դիարբեքիր	20 000	-
Դյորթյոլ	9 000	-
Էրզրում	5 500	-
Էսքիշեհիր	7 000	-
Գիրեսուն	328	-
Գյորելե	250	-
Հալեպ	26 064	-
Հայմանա	60	-
Իզմիր	256	-
Իզմիթ	58 000	-
Քալաջըք	257	-
Կարահիսարը սահիփ	5 769	2 222
Կայսերի	45 036	4 911
Կեսկին	1 169	-
Քըրշեհիր	747	-
Կոնյա	1 990	-
Քյութահյա	1 400	-
Մամուրեթ-ուլ-Ազիզ	51 000	4 000
Մարաշ	-	8 845
Նալլըհան	479	-

[122] H. Özdemir [ve baş], ss. 87-88.

1	2	3
Օրդու	36	-
Փերշեմբե	390	-
Սվազ	136 084	6 055
Սունգուրլու	576	-
Սյուրմենե	290	-
Թիրեբոլու	45	-
Տրապիզոն	3 400	-
Ուլուբեյ	30	-
Յոզղաթ	10 916	-
Ընդամենը	**422 758**	**42 766**

Ակնհայտ կեղծված այս տվյալները հրապարակվում են՝ լավատեղյակ լինելով, որ դիվանագիտական փաստաթղթերում տեղահանության միանգամայն այլ պատկեր է ներկայացված: Այսպես՝ Մերսինի ամերիկյան հյուպատոսը հաղորդում է, որ Ադանայից տեղահանվել է 25 000 հայ, Հալաչօղլուի նշած 14 000-ի փոխարեն:[123] Օրինակները բազմաթիվ են. Տրապիզոնի և Իզմիթի նահանգներից, ավստրո-հունգարական դիվանագիտական փաստաթղթերի համաձայն, տեղահան էր արվել ողջ հայ բնակչությունը. իսկ անգամ օսմանյան պաշտոնական վիճակագրության նվազեցված տվյալով՝ մինչև տեղահանությունը Տրապիզոնում բնակվում էր 30 000-ից ավելի հայ:[124]

[123] "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, volume 1, The Peripheries, vol. II, pp. 90-91.

[124] Տե՛ս, օրինակ, Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915-1918թթ.), Երևան, 2004, էջ 34:

Թուրք և թուրքամետ հետազոտողները սեփական հաշվարկներում լռելյայն շրջանցում են, որ Արևմտյան Հայաստանի որոշ վիլայեթների բնակչությունը ոչ թե տեղահանվել է Սիրիա, այլ ջարդի զոհ է դարձել տեղում: Այս առումով հատկանշական է Բիթլիսի օրինակը, որի բնակիչների կոտորածը իշխանությունները իրականացրել են հենց նահանգում: Թուրքական վայրագության այս արյունոտ դրվագը նոր լույս է սփռում Հայոց ցեղասպանության իրականացման միջոցների վրա: Ինչպես վկայում են փաստերը, մոտ 180 000 հայ բնակչություն ունեցող Բիթլիսում, 1916թ. դրությամբ (երբ ռուսական զորքերը մտան քաղաք) ողջ էին մնացել մի քանի հարյուր մահմեդականացած հայեր:[125] 1918թ. օսմանյան խորհրդարանի նիստերից մեկի ժամանակ նշվեց, որ միայն Մշո տարածաշրջանի 100 գյուղերում ջարդերին զոհ էր գնացել 80 000-90 000 հայ:[126] Բիթլիսի նահանգի կոտորածների անմիջական պատասխանատու՝ գեներալ Հալիլը, ընդունել էր, որ սպանել է ավելի քան 300 000 հայ:[127] Շուրջ 100 000 հայ զոհվել էր Սամսունի, Արևելյան Գարահիսարի, Տրապիզոնի ու Կիրասունի տարածաշրջաններում:[128]

Թուրք հեղինակները ջանք չեն խնայում ընթերցողին համոզելու, որ տեղահանությունը հրաշալի կազմակերպված և հայ բնակչության համար անվտանգ կերպով իրականացված միջոցառում է եղել՝ նվազագույն զոհերով: Նրանք պեղում են 1920-21 թթ. վիճակագրական տվյալներ՝

[125] ՀԺՊ ակադ., նշվ. աշխ., էջ 556:
[126] Վահագն Տատրյան, Հայոց ցեղասնությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Վոթերթաուն, 1995, էջ 59:
[127] Dadrian N. Vahakn, Warrant for Genocide, New Burnswick, 1999, p. 118.
[128] Ibid, էջ 56:

350-500 000 հայ կայսրությունից փոխադրվել է Ռուսաստան: Ընդ որում մեջբերվում է Արմենակ Պարոնիկյանի հաշվարկը, համաձայն որի «Վանի վիլայեթից 180 000, Բիթլիսի վիլայեթից 90 000, Էրզրումի վիլայեթից 120 000 այլ վիլայեթներից 60 000 հայ» անցել է ռուս- թուրքական սահմանը:[129] Այսպիսով թուրք պատմաբանները բացահայտում են օսմանյան մարդահամարի ստահոդ բնույթը, քանզի ներկայացված ցուցանիշների համեմատությունը թուրքական վիճակագրական տվյալների հետ ի ցույց է դնում, որ վերջիններս թերի են ներկայացրել հայ բնակչության թիվը: Օրինակ, ինչպե՞ս կարող էր Վանի նահանգից Ռուսաստան անցել երեք անգամ ավելի հայ, քան իբր բնակվում էր տարածաշրջանում 1914թ.:

Ստորև ներկայացնում ենք Օսմանյան կայսրության հայ բնակչության թվի և Պարոնիկյանի կողմից նշված գաղթականների վիճակագրության հարաբերակցությունը, ինչը վերստին փաստում է, որ օսմանյան վիճակագրության և իրականության միջև որևէ կապ գոյություն չունի:

Վիլայեթ	Օսմանյան նախապատերազմական մարդահամար, 1914	Պարոնիկյանի տվյալները	Բնակչության թվի և գաղթականների հարաբերակցությունը
Վան	67 792	180 000	1/ ~3
Էրզրում	125 657	120 000	1/ ~1
Բիթլիս	114 704	90 000	1 / ~0.8

[129] H. Özdemir [ve baş], ss. 87-88.

Գեներալ Կորգանովի տվյալներով, ռուսական բանակին հաջողվեց փրկել ընդամենը 200 000 հայ:[130] Թուրքերը նպատակ ունեն ապացուցել, որ հայ բնակչության ստվար զանգվածներ անցել են սահմանը հետևաբար տեղահանվելով՝ չեն կոտորվել:

Վիճակագրական ցուցանիշների այսօրինակ համադրումը բնավ էլ տգիտությունից կամ անտեղյակությունից չէ, այլ արտացոլում է հեղինակային խմբի մարտավարությունը՝ ամեն գնով ապացուցել անապացուցելին.

- 1915թ. Հայոց ցեղասպանության հետևանքով մարդկային զոհերը եղել են հնարավորինս քիչ:
- Հայ բնակչության մեծամասնությունը կարողացել է ապաստան գտնել Ռուսաստանում, որը պատերազմի տարիներին օժանդակություն է ցուցաբերել հայերին:

Աշխատության հեղինակները շրջանցում են նաև իրենց համար անհաճո, բայց ըստ էության անշրջանցելի մի հարց՝ Մեծ եղեռնի ժամանակ ի՞նչ ճակատագիր է վիճակվել հայ տղամարդկանց, մանավանդ դիվանագիտական զեկուցագրերում հստակորեն նշվում է, որ գաղթականների քարավաններում մեծամասամբ եղել են կանայք ու երեխաներ: Մի քանի էջ լցնելով զանազան շինծու հիմնավորումներով, պատմաբանները փորձում են լղոզել այս հարցը:[131]

Հասկանալի պատճառներով նրանք խուսափում են իրենց շարադրանքում արծարծել առաջին աշխարհամարտի ընթացքում հայկական զոհերի մասին գերմանական ռազմական և դիվանագիտական գերատեսչությունների վիճակագրական տվյալները: Այդ թվերը լավագույն դեպքում

[130] Dasnabedian Hrach, նշվ. աշխ., 119:
[131] H. Özdemir [ve baş], ss. 105-107.

տեղ են գտնում գրքի տողատակերում: Հայ ժողովրդի զանգվածային բնաջնջման անհերքելի հիշատակում է գեներալ Լիման ֆոն Սանդերսի շտաբի պետ թուրքական բանակի մայոր Ֆրանց Կարլ Էնդերսի այն հայտարարությունը, որ «ոչ մի ժողովուրդ այնքան չի տուժել առաջին աշխարհամարտից, որքան հայերը: Կոտորվեց 1,2 մլն մարդ»:[132]

Ի լրումն զինվորականների, Հայոց ցեղասպանության աննախադեպ չափերի մասին է վկայում Թուրքիայում Գերմանիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Ռադովիցը. ըստ նրա՝ 1,5 միլիոն հայ է զոհվել, իսկ ողջ մնացել է 425 000-ը:[133] Մեկ այլ գերմանացի, հետագայում նախարար էրցբերգերը, երկրորդելով Ռադովիցին, վկայում է, որ 1915-ին զոհ է գնացել 1,5 միլիոն հայ: Ուշագրավ է, որ թուրքերը, մատնանշելով ամերիկյան բարեսիրական Near East Relief կազմակերպության տվյալները, նշում են, որ Սիրիա տեղահանված հայերը մահանում էին հիվանդություններից՝ մոռանալով, որ հենց օսմանյան կառավարությունն էր ստեղծել գոյության այնպիսի պայմաններ, որոնք հաշվարկված էին հայ ժողովրդի ոչնչացման համար, ինչն ինքնին ցեղասպանություն է:[134] Թուրք պատմաբանների հաշվարկը պարզ է. նրանք ձգտում են ապացուցել, որ առաջին աշխարհամարտի ընթացքում զոհվել է ընդամենը 200 000 հայ:

[132] Գեներալ Լիման ֆոն Սանդերսի շտաբի պետ թուրքական բանակի մայոր Ֆրանց Կարլ Էնդերսի կարծիքը հայերի կոտորածի մասին, Հայոց ցեղասպանությունը գերմանական..., էջ 218:
[133] A. A. Türkei 183/44 A27493, 10/4/1916, տե՛ս նաև Vahakn N. Dadrian, The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification, p. 20.
[134] Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него, из Международное право в документах, Москва, 2000, стр. 319.

Սինչդեռ, ինչպես գրում էր թուրքական «Ալեմդարը» 1919թ. մարտի 13-ի համարում, վկայակոչելով Թուրքիայի ներքին գործերի նախարարության կազմած տեղեկագիրը, «800 000 հայ է սպանվել տեղահանության ընթացքում»:[135]

Աշխատության երրորդ գլխի սկզբում հեղինակներն անդրադառնում են 1917թ. հետո Կովկասում տիրող իրավիճակին, պատերազմում Թուրքիայի պարտությանը և Օսմանյան կայսրության 1918թ. դեկտեմբերի 31-ի օրենքին՝ աքորված հայերի ետադարձի մասին:[136] Այդ որոշումով ուժը կորցրեց տեղահանության մասին հանցավոր օրենքը:[137]

Հարկ է արձանագրել, որ բացի Դամադ Ֆերիդ փաշայի կառավարությունից, որը երիտթուրքերի գործած հանցանքն ընդունել է մասամբ, ետպատերազմյան Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության բոլոր իշխանությունները ժխտել են Մեծ եղեռնը:

1919թ. թուրքական կառավարությունը պաշտոնապես հայտարարում է. «Միություն կազմակերպության» մեղքը, որ մշակել և մտածված իրականացնում էր ոչնչացման ու կողոպուտի այդ ներքին քաղաքականությունը, ակնբախ է: Նրա պարագլուխները պատկանում են մարդկության ամենամեծ հանցագործների շարքին: ...Թուրք ժողովուրդը իր գլուխն է խոնարհում հայ ժողովրդի ողբերգության առաջ: Դա նա անում է տխրությամբ՝ հայ ժողովրդի և ամոթով՝ իր համար: Խոստովանելով իր մեղքը՝ նա պարտավորվում է տեր կանգնել հետևանքներին և պարտավորություններ է իրականացնում, որոնք հետևանք են այն իրադրության: Բայց թուրք ժողովուրդը մերժում է որևէ բարոյական պատասխանատվություն, որը կապված է իր անարժան ղեկավարների գործողությունների հետ և նրանց չի ճանաչում... Թուրքերն իսկապես սպանել են հայերին, կոտորածներ կազմակերպել, կողոպտել և ավերել նրանց տները»:[138]

Փաստորեն առաջին աշխարհամարտի ժամանակ և նրան հաջորդող տարիներին ցեղասպանության կանխամտածված ու կազմակերպված բնույթը երբեք կասկածի տեղիք չի տվել: 1920թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսում, թուրք պատվիրակն ընդունել է, որ «այս չարագործությունները, որոնք սարսռեցնում են մարդու հոգին, ակնհայտ են», և որ «Թուրքիայի միավորումը կատարվել է փոքրամասնությունների ոչնչացման գնով»:[139]

Ընդունելով Սևրի դաշնագրով հաստատված status quo-ն և ճանաչելով ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի գոյությունը, թուրքերը փաստորեն անուղղակի կերպով ստանձնեցին իրենց կատարած ոճրի պատասխանատվությունը:

Իբրև թուրքական պատասխանատվության դրսևորման ձև փաստորեն ընտրվեց անկախ Հայաստանի ստեղծումը և որոշ հայկական տարածքների վերադարձը Հայաստանի Հանրապետությանը:

[135] Vahakn N. Dardian, Documents of the Armenian Genocide in Turkish Sources, Genocide: A Critical Bibliographic Review, vol. 2. (ed. Israel W. Charny), London- New York: Facts on file, p. 108.

[136] H. Özdemir [ve baş], ss. 109-116.

[137] Տեղահանության մասին օրենքն ընդունվել էր կառավարության կողմից և երկար ժամանակ չէր ստացել օսմանյան խորհրդարանի քվեն և չէր ստորագրվել սուլթանի կողմից, այս մասին ավելի հանգամանալի տե՛ս, А. Авакян, Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999.

[138] The Turco-Armenian Question: The Turkish Point of View, Constantinople 1919, p. 84, տե՛ս նաև Ս. Պողոսյան, Կ. Պողոսյան, Թուրքերը թուրքերի մասին, Երևան, էջ 342:

[139] Le Monde, 3/06/1981.

1919թ. մարտին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարը, իր հերթին, հիմնվելով իր իսկ գլխավորած հաստատության երկու ամիսների ընթացքում հավաքած վիճակագրական տվյալների վրա, նշում է. «Պատերազմի ընթացքում կազմակերպված տեղահանության ընթացքում շուրջ 800 000 հայ է սպանվել»:[140]

Թուրք պատմաբանների աշխատության մեջ այս մասին որևէ հիշատակում չկա: Փոխարենը ներկայացվում են 1921թ. սկզբին Պոլսի պատրիարքարանի տվյալները (որոնք հասկանալի պատճառով միանգամից դառնում են արժանահավատ), համաձայն որոնց Օսմանյան կայսրության տարածքում բնակվում է 644 900 հայ: Ստորև ներկայացնում ենք այդ տվյալները:[141]

1	2	3	4
1.		*Ստամբուլ*	*150 000*
2.		*Էդիրնեի վիլայեթ*	*6 000*
3.		Նիկոմեդիա (անկախ սանջակ)	11 000
4.		Բուրսայի վիլայեթ	
	ա.	Բուրսայի սանջակ	11 000
	բ.	Բիլեջիքի սանջակ	4.500
5.		Քալե-ի Սուլթանիե (անկախ)	900
6.		Կարասի (անկախ սանջակ)	5 800
7.		Քյութահիա (անկախ սանջակ)	-
8.		Աֆյոն Գարահիսար (անկախ սանջակ)	7 000

[140] Vahakn N. Dadrian, The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification, p. 20, 1999, տե՛ս նաև Alemdar, 15/03/1919.
[141] H. Özdemir [ve baş], ss. 121-123.

1	2	3	4
9.		*Այդընի վիլայեթ (Իզմիր)*	*10 000*
10.		Կաստամոնուի վիլայեթ	
11.		և Ինեբոլուի անկախ սանջակ	8 000
12.		Անկարայի վիլայեթ	
	ա.	Անկարա քաղաք	-
	բ.	Քըրշեհիր	55 000
	գ.	Չորում	2 500
	դ.	Յոզղաթ	
Ընդամենը			60 000
13.		Կեսարիա (անկախ սանջակ)	4.000
14.		Կոնիայի վիլայեթ	10 000
15.		Սըվազի վիլայեթ	
	ա.	Սըվազի սանջակ	12 000
	բ.	Թոխատի սանջակ	1 800
	գ.	Ամասիայի սանջակ	2 000
	դ.	Շապին Գարահիսար	1 000
Ընդամենը			16 000
16.		Տրապիզոն	
	ա.	Տրապիզոն քաղաք	
	բ.	Լազիստան	
	գ.	Գյումուշխանե	10 000
17.		Չանիկ	5 000
18.		Էրզրումի նահանգ	1 500
19.		Վանի նահանգ	500
20.		Բիթլիսի նահանգ (չկա)	
21.		Դիարբեքիր	3 000
22.		Մամուրեթ ուլ- Ազիզ (Խարբերդ)	
	ա.	Խարբերդ	30 000
	բ.	Մալաթիա	2 000

1	2	3	4
	գ.	Դերսիմ	3 000
Ընդամենը			35 000
23.		*Ադանայի վիլայեթ*	*150 000*
24.		*Հալեպի վիլայեթ*	
	ա.	*Հալեպ քաղաք և Այնթապ*	*57 000*
25.		*Ուրֆա (անկախ սանջակ)*	*9 000*
26.		*Մարաշ (անկախ սանջակ)*	*10 000*
27.		*Երուսաղեմ (անկախ սանջակ)*	*2 000*
28.		*Դամասկոսի վիլայեթ*	*400*
29.		*Բեյրութի վիլայեթ*	*1 000*
30.		*Բաղդադի վիլայեթ*	*1 000*
31.		*Բասրայի վիլայեթ*	*400*
32.		*Մոսուլի վիլայեթ*	*800*
Ընդամենը			546 100
33.		*Բակուբա ճամբար*	*15 000*
Ընդամենը			561 000

Ներկայացվում է նաև մահմեդականների տներում և՝ արաբական ցեղերի մոտ ապաստանած հայերի թիվը (ի դեպ, թուրքերեն թարգմանությունը չի համապատասխանում փաստաթղթի անգլերեն բնագրին, որտեղ գրած է, թե մահմեդականների տներում և արաբական* ցեղերի մոտ շատ որբեր և երիտասարդ աղջիկներ կան, որոնք դեռ *չեն ազատագրվել* (ընդգծումը մերն է - *Ա. Ա.*):

* Արաբական ցեղերի մոտ, ըստ ներկայացված տվյալների, բնակվում էր շուրջ 3 800 հոգի: Հարկ ենք համարում նշել, որ արաբ ժողովուրդն առաջիններից մեկը օգնության անշահախնդիր ձեռք մեկնեց ցեղասպանության զոհերին:

Փաստորեն ստորև ներկայացված հայերը ունեցել են ստրկական կարգավիճակ:[142]

1.		Դեյր էլ-Զոր	
	ա.	Ջիբար, էգաբար և Վարակորա ցեղերի մոտ, նվազագույնը	500
	բ.	Ջիբուր ցեղ	600
	գ.	Շեմմար ցեղ	700
	դ.	Անեզե ցեղ	2 000
2.		Ռաս- ուլ-Այն, չեչենական ցեղերի մոտ	2 000
3.		Ստամբուլ և շրջակայքը	6 000
4.		Իզմիթ, Բուրսա, Բալըքեսիր	2 000
5.		Ինեբոլու	1 500
6.		Էսքիշեհիր և Կոնիա	3 000
7.		Կաստամոնու	500
8.		Տրապիզոն	2 500
9.		Սվազ	3 500
10.		Կեսարիա	3 500
11.		Էրզրում	3 000
12.		Դիարբեքիր և Մարդին	25 000
13.		Խարբերդ	3 000
14.		Բիթլիս և Վան	5 000
Ընդամենը			63 000
			561 000
Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թիվը			624 900

Թերևս ձեռնպահ մնացինք երկարաշունչ աղյուսակը հրապարակելուց, եթե այդքան բնութագրական չլիներ պատմական փաստերի խեղաթյուրումը: Սույն տվյալների

[142] H. Özdemir [ve baş], ss. 125.

հետ, գրքում ներկայացված է նաև վիճակագրական այս տեղեկանքի բնօրինակի ֆաքսիմիլեն: Համեմատելով երկու տարբերակները, ակներև է դառնում, որ պատմագրության մեջ նոր խոսք ասել հավակնող հեղինակները պատմական գեղծարարության մեջ շատ չեն հեռացել իրենց «համբավավոր» ուսուցիչներից: Այս թվերը վկայում են, որ հայերի մեծամասնությունը բնակվել է թուրքական վարչակարգի կողմից փաստացի չվերահսկվող տարածքներում (շուրջ 450 000 մարդ): Նույնքան հայ բնակվել է այն տարածքներում, որոնք փաստացի չեն վերահսկվել թուրքերի կողմից: Ավելին՝ Օսմանյան պետության հանցավոր գործողությունների արդյունքում շուրջ 63 000 հայ, անգամ պատերազմից հետո, ապրել է կիսաստրկական պայմաններում:

Ուշագրավ է վիճակագրական տեղեկանքի վերջում տրված հաղորդումը, ըստ որի հայերը մահմեդականություն են ընդունել, որպեսզի ազատվեն «իթթիհադի կողմից կազմակերպված հետապնդումներից, և շատ տեղահանվածներ ծպտյալ ապրում էին այլ շրջաններում: Վերապատվելի Վարդան Ամիրխանյանը, որին հանջողվել էր մնալ Խարբերդում, պատերազմի ողջ ընթացքում տեղեկացրել է, որ զգալի թվով օտարականներ, որոնք հայտնի էին որպես թուրքեր կամ ծպտվել էին առերես, բացահայտել են իրենց հայ լինելը: Կարծիք կա, որ շատ հայեր դեռևս թաքնվում են լեռներում, ապահով ապաստարաններում և չեն հանդգնում դուրս գալ անգամ այժմ՝ հետապնդումների ենթարկվելու վախից»:[143] Թուրք պատմաբանները փաստաթղթի թարգմանված տարբերակում միտումնավոր չեն ներկայացնում Օսմանյան կայսրության գործողությունների ցեղասպանական բնույթը բացահայտող այս պարբերությունը: Նրանք նաև Անկարայի վիլայեթի Կիրշեհիրի 2 500 հայ բնակչի վիճակագրական ցուցանիշի փոխարեն նշում են 55 000:

Ի դեպ, փաստաթղթերի թարգմանության մեջ սա միակ թերացումը չէ: Ինչպես բացահայտում է Աքչամը, թարգմանիչները միտումնավոր խեղաթյուրել են անգամ գերմանական տեքստերը՝ «արնահոսել» բառը թարգմանելով «ծաղկել»:[144]

Հեղինակները ևս մի մեթոդաբանական սխալ են գործում. առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության տարածքները նույնացնելով թուրքերի կողմից վերահսկվող տարածքների հետ: Իրականում պատերազմի ավարտից հետո կայսրությունը կորցրեց փաստացի վերահսկողությունը տարածքների մեծ մասի նկատմամբ, որոնք կառավարում էին այլ պետություններ:

Միաժամանակ, ուրանալով զանգվածային բնաջնջման քաղաքականությունը, արձանագրվում է, որ պատերազմից հետո բազմաթիվ հայեր վերադարձան Կիլիկիա: Պատմաբանները շահագրգիռ կերպով փորձում են ցույց տալ, որ հայերի համար Թուրքիան նախընտրելի բնակավայր էր: Նրանք չքմեղորեն մոռանում են, որ հայերի ետդարձը պայմանավորված էր այն իրողությամբ, որ պատերազմից հետո շատ տարածքներ, փաստորեն de-facto չէին պատկանում Թուրքիային: Ավելին, պարզ տրամաբանությամբ, հայ գաղթականները վերաբնակեցման երկընտրանք էլ չունեին. հո չէի՞ն մնալու անապատում:

[143] H. Özdemir [ve baş], s. 125:
[144] Agos, 17/09/2004.

Ինչ վերաբերում է կիլիկիահայերի վերադարձին, նրանց հայրենիքը վերահսկում էր Ֆրանսիան՝ համաձայն Սայքս-Պիկոյի պայմանագրի: Անգամ հայկական աղբյուրներն են փաստում, որ շուրջ 150 000 հայ ապաստանել է Կիլիկիայում:[145] Սակայն քեմալականների և Ֆրանսիայի կառավարության գաղտնի համաձայնությամբ Կիլիկիան Անկարայի կառավարությանը հանձնելը պատճառ դարձավ, որ հայ բնակչությունը կրկին բռնի գաղթի ճանփան: Հայերից շատերը զոհ գնացին քեմալականների վայրագություններին: Եթե թուրքական պաշտոնական պատմագրությունն այդքան ազնիվ է ու մտահոգ, թող պատասխանի, թե ինչ ճակատագրի արժանացան «երկիր-դրախտավայր» Թուրքիա վերադարձած կիլիկիահայերը:

Բրիտանական սևծովյան բանակի ռազմական հետախուզության տեղեկագրի հիման վրա հեղինակները պնդում են, որ 1914 և 1919 թվականների տվյալների համեմատության դեպքում հայ բնակչության թիվը, առանց Էրզրումի նահանգի, 773 430-ի փոխարեն կլինի 658 900:[146]

	1914	1919 Նոյեմբեր
1	2	3
Էդիրնե	*84 100*	*19 500*
Անթալիա	630	400
Անկարա	54 000	80 000
Այդին	20 700	21 000
Տրապիզոն	40 200	58 000
Բուրսա	61 200	65 000
Կեսարիա	52 200	50 000

[145] ՀԺՊ ակադ., նշվ. աշխ., էջ 562:
[146] H. Özdemir [ve baş], s. 134.

1	2	3
Կոնիա	13 200	12 000
Կաստամոնու	9 000	13 000
Սվազ	151 700	162 000
Ադանա	*57 700*	*72 000*
Բալիկեսիր	8 700	9 000
Կոստանդնուպոլիս	*84 100*	*83 000*
Էրզրում	136 000	-
Իզմիր[*]	-	14 000
Ընդամենը	773 430	658 900

Այս թվերը անգամ մոտավոր աղերս չունեն նույն ժամանակաշրջանին առնչվող ժողովրդագրական որևէ ցուցանիշի հետ. կամ չափազանցված են, կամ թերհաշված: Ի դեպ, հենց անգլիացիները պատերազմի ընթացքում լույս տեսած «Կապույտ գրքում» փաստում են, որ իրենք երբևէ չեն ունեցել Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվի վերաբերյալ հավաստի վիճակագրություն:

1919թ., երբ քննարկվում էր Միացյալ Նահանգների կողմից Թուրքիայի մանդատը վերցնելու հարցը, ԱՄՆ պետդեպարտամենտի հանձնարարությամբ կազմվում է Քինգ-Քրեյնի զեկույցը, որտեղ նշվում է, որ միայն Կ. Պոլսում (որը պիտի ներառեր ավելի մեծ տարածք, քան քաղաքը, և դառնար միջազգային գոտի) հայերը մոտ 200 հազար են: Զեկույցի համար հիմք էր հանդիսացել այն գնահատականը, որ Օսմանյան կայսրության մայրաքաղաքի բնակչության

[*] Շեղատառով նշված են թուրքական իշխանությունների կողմից փաստացի չվերահսկվող տարածքները:

թիվը հասնում է 2 միլիոնի, որից 60 տոկոսը թուրքեր են, 25-ը՝ հույներ և 10 տոկոսը՝ հայեր:[147]

Երրորդ գլխում հեղինակները հայերին մեղադրում են նաև «զավթիչներին» սատարելու և արդեն ավանդական պիտակ դարձած դավաճանության մեջ: Այնքան են խճճվում ինքնահնար այս տեսության սարդոստայնի մեջ, որ նույնիսկ զոհին վերագրում են դահճի կարգավիճակ, իբր հայերն են թուրքերի դեմ ցեղասպանություն իրականացրել...

Ժխտման տենդով բռնված գիտնականները փորձում են իրենց պետության իրավանախորդի գործողությունների անդրադարձը սահմանափակել սոսկ 1915 թվականով, թեև հանրահայտ է, որ սուլթանական կառավարության և հանրապետական Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը շարունակվել է ընդհուպ մինչև 1920-ական թվականների կեսերը:

Առաջին աշխարհամարտի վերջում, երբ Գերմանիայի և իր դաշնակիցների պարտությունն արդեն ժամանակի հարց էր, Թուրքիան, ոգևորվելով 1917թ. ռուսական հեղափոխություններով և Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտության պայմանագրով, նվաճողական արշավ ձեռնարկել դեպի Անդրկովկաս: Թուրքական զորքերը հատեցին անգամ 1914թ. ռուս-թուրքական սահմանը, վերստին օրհասի դամոկլյան սուրը կախելով հայ ժողովրդի գլխին՝ խլելով բազմահազար կյանքեր:[148]

1920թ. հայ-թուրքական պատերազմը, քեմալականների կողմից Կիլիկիայի զավթումը, Զմյուռնիայի կոտորածը... սրանք Թուրքիայի կողմից հայ ժողովրդի դեմ իրակա-

[147] В. И. Шпилькова, Империалистическая политика США в отношении Турции (1914-1920гг.), Москва, 1960, стр. 98.
[148] Ավստրո- հունգարական..., էջ 114-116:

նացված ցեղասպանական արշավի տարբեր հանգրվաններն են, յուրաքանչյուրը հայոց պատմության ևս մի ողբերգական դրվագ:

Թուրքական պատմագրությունը պատմական հիշողության կորստով փորձում է պատասխանատվությունից զերծ պահել «նոր Թուրքիա» կերտող քեմալական վարչակարգին, որը որպես իրավահաջորդ իրականում ժառանգեց իթթիհատի քաղաքականությունը:

Այսպիսով, «Հայեր. աքսոր և գաղթ» գրքի հիմնական նպատակը օսմանյան կառավարության գործողությունների արդարացումն է՝ հընթացս արծարծելով նաև հայ բնակչության թվաքանակի հարցը: Հեղինակները ճգնում են ապացուցել, որ երիտթուրքերը չեն մշակել հայ ժողովրդի բնաջնջման ծրագիր, ոչ էլ ցեղասպանություն են իրագործել:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հայոց ցեղասպանության փաստը Թուրքիան համառորեն չի ճանաչում, այն դառնում է հայ-թուրքական հարաբերությունները պայմանավորող անկյունաքարային գործոն: Ցեղասպանությունը սոսկ պատմական հարց չէ, պատմաբանները հիմնականում արել և շարունակում են իրենց գործը, մեկնաբանում և վերլուծում են առկա փաստերը, գիտական շրջանառության մեջ մտցնում նորերը: Այսօր նրանց պիտի միանան դիվանագետներն ու իրավաբանները: Մեծ եղեռնը նաև քաղաքական և իրավական հարց է՝ հանցագործություն մարդկության դեմ, որը չի կարող մնալ անպատիժ: Հայ ժողովրդի չսպիացած վերքը կարող է ապաքինվել, երբ թուրքական իշխանությունները խիզախություն ցուցաբերեն ճանաչելու և դատապարտելու Մեծ եղեռնը:

Այս ասպարեզում լիարժեք պահանջատերը հայկական պետականությունն է՝ հասարակության և Սփյուռքի ջանքերի համադրումով: Հայ-թուրքական հարաբերությունների շուտափույթ կարգավորման ջատագովները պնդում են, որ ժամանակակից աշխարհի մարտահրավերներում առաջնային է երկրների և ժողովուրդների տնտեսական շահը: Անշուշտ, տնտեսական զարգացման հիմնախնդիրները շատ կարևոր են Հայաստանի համար, սակայն եթե տնտեսությունը պետության առաջընթացի շարժիչն է, Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտումը ազգային ոգու բաղադրիչն է, որը պետք է դիտարկել նաև Հայաստանի ռազմավարական անվտանգության տեսանկյունից:

Եղեռնի պաշտոնական ճանչումը մի հարվածով կփլուզի թուրքական դիվանագիտության ստի ու կեղծիքի հակահայկական վերնաշենքը, լուրջ հարված կհասցվի

Թուրքիայի միջազգային վարկին՝ թերևս նոր հուն տեղափոխելով արցախյան հարցի կարգավորումը: Այս ամենը քաջ գիտակցում է Անկարան, և դրանով է բացատրվում նրա անզիջում դիրքորոշումը: Օր-օրի ծավալվում է Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականությունը՝ հասցվելով պետական գաղափարախոսության մակարդակի:

Հայոց ցեղասպանության արյունոտ խաչը ժառանգություն ստանալով Օսմանյան կայսրությունից՝ հանրապետական Թուրքիան ուրացության ճակատում չի խնայում ոչ ջանք ու ոչ էլ ֆինանսական միջոցներ:

Նրա անմիջական հովանավորությամբ, ի լրումն նախկինում սանձազերծված կեղծարարական ինդուստրիայի, հրատարակվում են պատմական իրողությունները ծուռ հայելու մեջ աղավաղող աշխատություններ, գործի են դրվում հակահայկական համացանցային կայքեր, հիմնվում են գիտական կենտրոններ: Թուրքական պաշտոնական քարոզչամեքենան օգտագործում է ոչ միայն թուրք, այլև օտարազգի պատմաբանների ուժերը 20-րդ դարի առաջին ցեղասպանության ճշմարտությունը խեղաթյուրելու համար:

Թուրքերը բազմիցս հայտարարել են, որ պատրաստ են բացել արխիվները, անգամ երկխոսություն սկսել հայ պատմաբանների հետ: Այդպիսի հայտարարությունները սակայն կրում են սոսկ քարոզչական բնույթ:

Հայոց ցեղասպանության դատապարտումը պետք է դիտարկել նաև միջազգային իրավունքի համատեքստում: Եվ ամենակարևորը՝ գործադրել միասնական ջանքեր ազգովի, պահանջատիրոջ պատասխանատվությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1
Հայերի տեղահանությունը
(Բողոքականներ)

Տուժած նահանգները	Մարդկանց թիվը նախքան տեղահանությունը
Սվազի նահանգ	5 000
Վանի նահանգ	3 000
Մամուրեթ-ուլ Ազիզի նահանգ	12 000
Դիարբեքիրի նահանգ	12 000
Ադանայի նահանգ	6 000
Էրզրումի նահանգ	5 000
Հալեպի նահանգ	7 000
Մալաթիայի գավառ	2 000
Կեսարիայի գավառ	7 000
Մարաշի գավառ	6 500
Ուրֆայի գավառ	1 500
Ընդամենը	67 000

Տեղահանվածների թիվը՝ 70% կամ 46 900:
Տեղ հասածների թիվը՝ 25% կամ 1 1750: (Սա համարվում է առավելագույն գնահատական):[149]

[149] Նույն փաստաթղթերը տրամագծորեն հակառակ մեկնաբանությամբ ներկայացված են թուրք համահեղինակների աշխատանքում, "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, volume 1, the Lower Euphrates, pp. 94-104.

Հավելված 2
Հայ ներգաղթողների վիճակագրությունը

Դամասկոսից մինչև Մաան(ավելի քան)	100 000
Համմա և շրջակա գյուղերը	12 000
Հոմս և շրջակա գյուղերը	20 000
Հալեպ և շրջակա գյուղերը	7 000
Մաարա և շրջակա գյուղերը	4 000
Բաբ և շրջակա գյուղերը	8 000
Մամբիջ և շրջակա գյուղերը	5 000
Ռաս-էլ-էյն և շրջակա գյուղերը	20 000
Ռաքքա և շրջակա գյուղերը	10 000
Դեյր-էլ-Զոր և շրջակա գյուղերը	300 000
Ընդամենը	486 000

3 փետրվարի 1916թ.[150]

[150] "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, volume 1, the Lower Euphrates, pp. 113. ï»°ë Ý³¨ U.S. State Department Record Group 59, 867.48/271.

Հավելված 3
Թուրքական պատմական ընկերության «Հայեր. Աքսոր և գաղթ» աշխատությունում վկայակոչված փաստաթղթերից մեկը այնպես, ինչպես պահպանված է ամերիկյան արխիվներում:

Թիվ 19

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Տրապիզոն, Թուրքիա, 29 հուլիսի, 1915թ.

Առարկան. Տրապիզոնից հայերի տեղահանումը

Վաշինգտոն
Պատվարժան պետական քարտուղար

Պարոն,

Դեպարտամենտի տեղեկատվության համար, պատիվ ունեմ ներփակել դեսպանությանն ուղղված հաղորդագրությունը՝ հայերի տեղահանման վերաբերյալ:

Համաձայն Սամսունի հյուպատոսության գործակալից ստացված հաղորդագրության, մոտավորապես 5 000 հայեր տեղահանվել են Սամսունից, և նրանցից շատերը սպանդի են ենթարկվել ճանապարհին: Մոտավորապես 150 ընտանիք հավատափոխ է արվել:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,

Ամերիկյան հյուպատոս

Ներփակվածը՝ ըստ ասվածի:

840.1

Աղբյուր՝ *1. U. S. State Department Record Group 59, 867.4016/128.*
2. United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 23.

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Տրապիզոն, 28 հուլիսի, 1915թ.

Կոստանդնուպոլիս
Ամերիկյան դեսպան
Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Ցանկանում եմ գաղտնի գրել Ձեզ այն իրադարձությունների մասին, որ տեղի են ունեցել այստեղ վերջերս: Ես հասկանում եմ, որ մեր հյուպատոսության համար բացարձակ էական է պահպանել լավ հարաբերությունները վալիի և տեղական այլ պաշտոնյաների հետ, հակառակ դեպքում ծառայություն չի մատուցվի, եթե պետք լինի պաշտպանել հյուպատոսությանը: Կապված մեր չեզոք դիրքի և տեղի թուրքերի ընդհանուր տրամադրության հետ, որը շատ թշնամական է դրսից եկած ամեն տեսակի առաջարկներին և իրենց ներքին խնդիրներին միջամտելուն, նաև այն զգացումը, որ այժմ նրանք դիրքի տերն են, անհրաժեշտ է դարձնում չափազանց շրջահայաց և խելամիտ լինել: Այնուամենայնիվ, ինձ թվում է, որ դուք պետք է լիովին տեղեկացված լինեք այն մասին, թե ինչ է տեղի ունենում այստեղ, չնայած, որ այն կարող է ուղղակիորեն մեզ չվերաբերել՝ լինելով Օսմանյան կայսրության և նրա հպատակների խնդիրը:

Շաբաթ օրը, հունիսի 26-ին, բոլոր հայերի տեղահանման մասին հայտարարությունը տարածվեց փողոցներում: Հուլիսի 1-ին, հինգշաբթի օրը, բոլոր փողոցները հսկում էին սվիններով զինված ոստիկանները, և հայերին իրենց տներից հանելու գործն սկսվեց: Բեռներն ու կապոցները մեջքներին՝ տղամարդկանց, կանանց ու երեխաների խմբերը հավաքեցին հյուպատոսության մոտ մի փոքրիկ խաչմերուկում, և երբ հարյուրին մոտ մարդ հավաքվեց, սվիններով զինված ոստիկանները հյուպատոսության մո-

տով նրանց քշեցին շոգի ու փոշու միջով Գյումուշհանեի և Էրզրումի ճանապարհի ուղղությամբ: Նրանց պահեցին քաղաքից դուրս մինչև մոտավորապես 2 000 հոգու հավաքվելը և հետո քշեցին Գյումուշհանեի ուղղությամբ: Ամենավշտալին կանանց և երեխաների խումբն էր: Այս մարդկանց մի մասը հարուստ և բարեկիրթ խավերից էր: Մի մասը սովոր էր շքեղության և հարմարավետության: Այստեղ կային բոլոր խավերի ներկայացուցիչներ՝ վանականներ, վաճառականներ, բանկիրներ, իրավաբաններ, մեխանիկներ, դերձակներ և այլն: Գեներալ նահանգապետն ինձ ասաց, որ նրանց թույլատրվում է կարգավորել կառքերի հարցը, սակայն, կարծես ոչ ոք կարգադրություն չի արել: Ես գիտեմ մի հարուստ վաճառականի, որը 15 լիրա (66 դոլար) էր վճարել մի կառքի համար, որն իրեն ու կնոջը պետք է տաներ Չևիզլիկ, և երբ նա հասավ այն կայանը, որտեղ նրանք հավաքվում էին Դեյերմենդերեի մոտ՝ քաղաքից 10 րոպեի ճանապարհի վրա, ոստիկանները հրամայեցին նրան դուրս գալ կառքից, որը ետ ուղարկվեց քաղաք: Հենց սկզբից ամբողջ մահմեդական բնակչությունը գիտեր, որ հայերն իրենց ավարն են, և նրանց հետ վերաբերվում էին որպես հանցագործների: Նախ, հայտարարության օրվանից՝ հունիսի 25-ից, ոչ մի հայի չթույլատրվեց վաճառել որևէ իր, և պատժի սպառնալիքով բոլորին արգելեցին (տես՝ հայտարարության տեքստը) գնել նրանցից որևէ իր: Այդ դեպքում, նրանք ինչպե՞ս կարող էին գումար ձեռք բերել ճամփորդության համար: Վեցից ութ ամիս Տրապիզոնում ոչինչ չէր աշխատել, և մարդիկ կերել էին իրենց խնայողությունները: Այդ դեպքում ինչո՞ւ նրանց արգելվեց վաճառել գորգեր կամ որևէ իր, որը հայերը ստիպված պիտի անեին, որպեսզի ձեռք բերեին ճամփորդության համար անհրաժեշտ գումարը: Շատ մարդիկ, ովքեր իրեր ունեին և կարող էին վաճառել եթե թույլ տրվեր, ստիպված էին ճանապարհ ընկնել ոտքով, առանց գումարի, մեջքներին կրելով այն, ինչ կարող էին հավաքել իրենց տներից: Այսպիսիները, բնականաբար,

շուտով այնքան էին թուլանում, որ ետ էին մնում, սվինահարվում և գետն էին նետվում, իսկ նրանց մարմինները, կամ Տրապիզոնի մոտով գետը քշում տանում էր ծով, կամ կպչում էին գետի ծանծաղ մասերի քարերին, որտեղ 10-12 օր մնալով՝ նեխում էին՝ հարուցելով այն անցորդների զզվանքը, ովքեր պատահաբար ստիպված էին լինել այդ մասերում: Ես զրուցել եմ ականատեսների հետ, ովքեր պնդում են, որ տեղահանումից 15 օր հետո կարելի էր տեսնել բազմաթիվ մերկ դիակներ՝ կպած գետի ջրասույզ ծառաբներին, իսկ հոտն այդտեղ անտանելի էր:

Հուլիսի 17-ին Գերմանիայի հյուպատոսի հետ ձիով շրջագայելիս մենք հանդիպեցինք երեք թուրքերի, որոնք ավազի մեջ գերեզման էին փորում մի մերկ դիակի համար, որը մենք տեսանք գետի մեջ: Դիակն այնպիսի տեսք ուներ, կարծես ջրում մնացել էր 10 և ավելի օր: Թուրքերն ասացին, որ գետի վերին մասերում հենց նոր թաղել էին ևս չորս դիակ: Մի ուրիշ թուրք էլ ասաց, որ մեր գալուց մի քանի րոպե առաջ մի դիակ էլ ջուրը տարել էր գետն ի վար, դեպի ծով:

Մինչև հուլիսի 6-ը (երեքշաբթի) Տրապիզոնի բոլոր հայկական տները՝ մոտ 1 000, դատարկվել են բնակիչներից, որոնք արտաքսվել են: Չէին էլ հարցնում, թե ով էր մեղավոր, ով՝ անմեղ կառավարության դեմ շարժման մեջ: Հայ լինելը բավարար պատճառ էր՝ նրան որպես հանցագործ վերաբերվելու և արտաքսելու համար: Սկզբում, բոլորը պետք է գնային, բացի հիվանդներից, որոնց տարան քաղաքային հիվանդանոց մինչև բուժվելը: Հետո բացառություն արվեց ծերերի, հղիների, երեխաների, պաշտոնյա հայերի և կաթոլիկների նկատմամբ: Վերջապես որոշվեց, որ պետք է գնան նաև ծերերն ու կաթոլիկները, որոնք արտաքսվեցին վերջում՝ գնացածների ետևից: Տարբեր ժամանակներում բազմաթիվ նավակներ լցվեցին մարդկանցով և տարվեցին Սամսունի ուղղությամբ: Բոլորը հավատացած են, որ այդ մարդիկ ջրասույզ են արվել: Տեղահանումը սկսելուց մի երկու օր առաջ մի մեծ նավակ՝ մարդկանցով լի, որոնք, ըստ երևույթին, հայկական համայնքի անդամներ էին, շարժվեց դեպի Սամսուն: Երկու օր հետո, ոմն Վարդան,

որը ռուսահպատակ էր և մեկն էր նրանցից, որ հեռացել էին նավակով, Տրապիզոն վերադարձավ ցամաքով՝ գլխից ծանր վիրավորված և այնքան խելացնոր, որ ոչ ոք նրան չէր հասկանում: Այն ամենը, որ նա կարողանում էր ասել, «բումբում»-ն էր: Իշխանությունները նրան ձերբակալեցին և տարան քաղաքային հիվանդանոց, որտեղ էլ հաջորդ օրը նա մահացավ: Մի թուրք պատմեց, որ այդ նավակը Տրապիզոնից ոչ շատ հեռու հանդիպել էր ոստիկաններով լի մի ուրիշ նավակի: Վերջիններս սպանել են հայերին և ծովը նետել: Ոստիկանները կարծել են, թե սպանել են բոլորին, սակայն Վարդանը՝ հսկա և ուժեղ տղամարդ լինելով, միայն վիրավորվել էր և աննկատ վերադարձել ափ: Տղամարդկանցով լի բազմաթիվ այսպիսի նավակներ էին հեռանում Տրապիզոնից, որոնք, սովորաբար, մի քանի ժամ անց վերադառնում էին դատարկ:

Տոցը Տրապիզոնից երկու ժամվա հեռավորության վրա գտնվող մի գյուղ է, որը բնակեցված է Գրիգորյան ու կաթոլիկ հայերով և թուրքերով: Համաձայն մի վստահելի ականատեսի, Պողոս Մերիմյանին՝ մի հարուստ և ազդեցիկ հայի, և նրա երկու որդիներին նստեցրել են մեկը մյուսի ետևից և այնպես են կրակել, որ փամփուշտն անցել է նրանց երեքի միջով: 45 տղամարդկանց և կանանց տարան գյուղից քիչ հեռու գտնվող մի դաշտ: Սկզբում կանայք անարգվեցին ոստիկանական սպաների կողմից, հետո հանձնվեցին ոստիկաններին: Համաձայն այդ վկայի, մի երեխայի սպանել են՝ գլուխը ժայռին խփելով: Բոլոր տղամարդիկ սպանվել են, և այս 45 հոգուց ոչ մի մարդ չի փրկվել: Ասում են, որ Ապիկ Մսրը՝ ֆրանսիական հյուպատոսության թարգմանը, և Տրապիզոնի Paquet S/S ընկերության գործակալն իր մոր և ազգականների հետ, ամառն էին անցկացնում Տոց գյուղում, և եղել են այս խմբում: Պարոն Մսրը երկու տարի առաջ էր ամուսնացել Փարիզում, և այժմ նրա կինն ու քույրը Ռուսաստանում են:

Երեխաներին փրկելու ծրագիրը, համաձայն որի նրանց պետք է տեղավորեին Տրապիզոնի դպրոցներում և որբանոցներում այն կոմիտեի հսկողությամբ, որի կազմակերպողն ու հովանավորը հույն արքեպիսկոպոսն էր, նա-

խագահը՝ վալին, փոխնախագահը՝ արքեպիսկոպոսը, երեքական մահմեդական և քրիստոնյա անդամներով, փլուզվեց, և այժմ աղջիկներին հանձնել են բացառապես մահմեդական ընտանիքներին, որի հետևանքով նրանք ցրվել են: Որբանոցների արգելումն ու երեխաների ցրումը մեծ հիասթափություն էր մեր հյուպատոսության և հույն արքեպիսկոպոսի համար, որը շատ ջանք էր գործադրել այդ ծրագրի իրականացման և վալիին նեցուկ լինելու համար, սակայն Նեյլ բեյը՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարը, որը դեմ էր այդ ծրագրին, շատ արագ կարողացավ խափանել այն: Պարզվում է, տղաներից շատերին ուղարկել են Պլատանա՝ հողատերերին բաժանելու համար: Բարեբախտաբար ավագ տարիքի աղջիկները, որոնք որպես դայակներ պահվել էին որբանոցներում, ապրում են մեծ տներում՝ հրոսակախմբի անդամների զվարճությունների համար: Ես քաջատեղյակ եմ, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներից մեկը քաղաքի կենտրոնի տներից մեկում պահում է ամենագեղեցիկ աղջիկներից տասին՝ իր և ընկերների համար: Փոքր աղջիկներից մի քանիսը տարվել են հարգարժան մահմեդականների ընտանիքները: Ամերիկյան միսիայի աշակերտների զգալի մասը մահմեդականների ընտանիքներում է միսիայի հարևանությամբ, նրանց այցելել է տիկին Քրոֆորդը, սակայն նրանց մեծ մասը, իհարկե, այնքան էլ բախտավոր չէ:

1 000 հայկական տների կահ-կարասին մեկը մյուսի ետևից տանում է ոստիկանությունը: Կահույքը, անկողինը և արժեքավոր իրերը պահեստավորվում են քաղաքի մեծ շինություններում: Դասակարգման փորձ չի արվում, և պարզապես ծիծաղելի է այն գաղափարը, որ սեփականությունը պահպանվելու է «հակերով կառավարության հսկողության ներքո, որպեսզի ետ վերադարձվի տերերին՝ նրանց գալուց հետո»: Իրերն իրար վրա են լցվում առանց առանձնացնելու և համակարգելու որևէ փորձի: Թուրք կանանց ու երեխաների ամբոխը գիշատիչների նման հետևում է ոստիկաններին և խլում այն ամեն, ինչի վրա կարող է թաթը դնել: Երբ ոստիկանությունը տանում է առավել արժեքավոր իրերը, նրանք ներխուժում և տանում են մնացածը: Ես ամեն օր ա-

կանատես եմ լինում այսպիսի ներկայացումների: Ենթադրում եմ, որ մի քանի շաբաթից, տները դատարկելուց հետո, նրանք կներխուժեն նաև խանութները և պահեստները: Այն հանձնաժողովը, որի ձեռքում է այս գործը, այժմ խոսում է հայերի պարտքերը մարելու նպատակով կահ-կարասու և սեփականության այս մեծ հավաքածուների վաճառքի մասին: Գերմանիայի հյուպատոսն ինձ ասաց, որ չի հավատում, թե հայերին կթույլատրվի վերադառնալ Տրապիզոն, նույնիսկ պատերազմի ավարտից հետո:

Հսկայական նախիրները, որ, անկասկած, բանակի համար հայերից էին հավաքվել գյուղերում, զինվորները քշելով տարան Տրապիզոնի միջով:

Ռուսական, պարսկական և բուլղարական անձնագրեր ունեցող հայերը բոլորն էլ արտաքսվեցին, անկախ նրանց օգտին եղած երաշխավորագրերի: Արաբյանները, որ ունեին Բրիտանիայի հովանավորությունը, նույնպես արտաքսվեցին: Զոն Արաբյանը տեղի բրիտանական հյուպատոսության թարգմանը, արտաքսվեց այն ամենով, ինչ կարողացավ տանել ձեռքով:

Եթե զինվորները չէին կարողանում ուտելիք գտնել Էրզրումի ճանապարհին, իսկ ասում են, որ շատերն են սովից մահացել, ինչպես կարող էին 6 000-10 000 հայեր հուսալ, որ սնունդ կճարեն իրենց համար այն դեպքում, երբ նրանց հսկում էին մահմեդականները որպես իրենց օրինական ավարը:

Ես հենց նոր խոսում էի մի երիտասարդի հետ, որն իր ծառայությունն է կատարում «Իշահատ թաբուրի»-ում (շինարարական գնդում), որն աշխատում է Գյումուշհանե տանող ճանապարհին: Նա ինձ ասաց, որ 15 օր առաջ բոլոր հայերը, թվով 180 հոգի, առանձնացվեցին մյուս աշխատողներից և քայլքով ճամբարից հեռացվեցին ու գնդակահարվեցին: Նա նշեց, որ լսել էր հրացանների համազարկը և հետագայում այն մարդկանց թվում էր, որոնց ուղարկել էին դիակները թաղելու: Նա ասաց նաև, որ դիակները մերկ էին, քանի որ հագուստները հանել էին:

Վերջերս բազմաթիվ կանանց ու երեխաների դիակներ են ափ շպրտվել Տրապիզոնի իտալական վանքի պա-

տերի տակ, և հույն կանայք թաղել են դրանք ավազներում այնտեղ, որտեղ գտել են:

Հյուպատոսարանի պատուհանից տեսա մի դիակ, որն ափ շպրտվեց այն տեղ, ուր լողանում են թուրք երեխաները: Դիակը պարանով կապվեց և տարվեց բաց ծով:

Մի թուրք ջենտլմեն, որը Տրապիզոնում կառավարական պաշտոնյա է, բավական անկեղծորեն և շատ հուզված իր անհանգստությունն է արտահայտել փոխհյուպատոսին՝ Տրապիզոնի հայերի նկատմամբ ցուցաբերվող սարսափելի անմարդկային վերաբերմունքի առթիվ:

Այլ մանրամասներ էլ կարելի է ավելացնել հայերի հանդեպ կիրառվող գազանությունների վերաբերյալ, սակայն դժվար է հավաստել այն բոլոր պատմությունները, որ լսում ենք, և ես սահմանափակվում եմ նրանցով, որոնք հավատում եմ, որ ճշմարիտ են:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,
Ձեր խոնարհ ծառան,
(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,
Ամերիկյան հյուպատոս

840.1

Աղբյուր՝ *1. U. S. State Department Record Group 59, 867.4016/128.*
2. United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 24-28.

A New Effort to Deny the Armenian Genocide On the Book "Armenians: Exile and Migration" of the Turkish Historical Society

Summary

The Armenian Genocide, which has been an important component of the Turkish-Armenian bilateral relations, has been constantly denied by Turkey for the past 90 years. The issue of the Genocide is not solely a historical question: due to Turkish policies, the Armenian Genocide remains on the top of the political agenda in the relations between the two states. While recognizing the Republic of Armenia as an independent state in 1991, Turkey delayed the establishment of diplomatic relations with its eastern neighbor. The explanation for this inadequate political behavior is deeply rooted in the history and geopolitics of Turkey. There are several barriers, which make good neighborly relations between Armenia and Turkey a distant reality. These barriers are the international recognition of the Armenian Genocide, the Nagorno-Karabakh conflict, as well as the divergence of geopolitical and national security interests of both countries. Even with these in mind, the first Armenian administration adopted a moderate policy towards Turkey by not including the Genocide recognition in its foreign policy agenda. On the other hand, officials in Ankara, adopted a "hard-line" position towards Yerevan.

Denial of genocide is the last phase of the crime against humanity, when the executioner eradicates the collective memory of the victimized group. Since 1915, each and every Turkish government has denied the crime of the Ottoman Empire and the Ittihatist government. One of the elements of that denial has been demographic manipulation- as Israel Charny says: demography is being questioned to show that few people were involved. Since 1878 Ottoman government and Turkish officials, together with the quasi-official historiography have tried to downplay and reduce the number of the Armenians in the Ottoman Empire and Turkey.

The recent book by Turkish Historical Society (Türk Tarih Kurumu) "Armenians: Exile and Migration" follows the same line and policy. The collective monograph is written by *Yusuf,* Halaçoğlu, Hikmet Özdemir, Kemal Çiçek, Ömer Turan, Ramazan Çalık: it took several years and considerable amount of financial resources to be completed.

Though the work tends to be "a new effort" concerning the fate of Armenians in the Ottoman Empire during World War I, it has been noting more than a vain attempt to distort historical reality. The book consists of three chapters "Armenian Population in the Ottoman State," "Exile and Resettlement of Armenians in Syria," "Armenians after Exile." This work is nothing but an attempt to further develop Turkish revisionist history by utilizing false scientific methods to obtain legitimacy and present the official Turkish government's position.

Ermeni Soykırımını reddetmeye yönelik yeni bir gayret Türk Tarih Kurumu: "Ermeniler: Sürgün ve Göç" kitabı üzerine

Özet

Türkiye yaklaşık 90 yıldır Ermeni Soykırımını reddetmekte ve bu sorun günümüz Ermeni-Türk ilişkilerinde ana faktör olmayı sürdürmekte. Bu mesele tarihi bir sorun değildir. Türk siyasetinde Ermeni Soykırımı, ikili politik gündemin üst sıralarında yerini almakadır. Türkiye, Ermenistan Cumhuriyeti'ni bağımsız bir ülke olarak tanımasına rağmen, komşusuyla diplomatik ilişkiler tesis etmekte gecikti. Bu uygunsuz politik davranışın kökleri tarih ve jeopolitiğin derinliklerinde yer almaktadır. İki ülke arasında, iyi komşuluk amacını, uzak bir hedef haline dönüştüren birçok bariyerler bulunmakta. Bu bariyerler; Ermeni soykırımının uluslararası tanınması, Karabağ sorunu ve değişik jeopolitik ve ulusal güvelik menfaatleri vb. ilgilidir. Bağımsız Ermenistan'ın ilk politik eliti Türkiye'ye yönelik dengeli yaklaşımını (Ermeni Soykırımının tanınmasını dış politika önceliklerinin dışında tuttu) açıklamasına rağmen Ankara'daki resmi yetkililer, kendi adlarına Erivan'a karşı "şahin pozisyon" aldılar. Soykırımın reddi, kırımcının kırıma uğramış grubun kolektif bilinçaltını tamamıyla yoketmeye çalıştığı koşullarda, insanlığa karşı işlenmiş suçun son aşamasıdır. 1915 yılından bu yana tüm Türk hükümetleri, İttihatçı hükümet de dahil olmak üzere Osmanlı İmparatorluğu'nun bu suçunu reddetmektedir. Reddiyenin unsurlarından biri de demografidir, -İsrael Charney'nin dediği gibi "Demografi, daha az kişinin olaylara karıştığını göstermek için sorgulanmaktadır". 1878'den bu yana Osmanlı yönetimi ve Türk yetkililer, kendi yarı-resmi tarihçilikleriyle, Türkiye'deki Ermeni nüfusunun sayısını az göstermeye çalışmaktalar. Türk Tarih Kurumu'nun "Ermeniler: Sürgün ve Göç" başlıklı son kitabı da bu konuda istisna değildir. Kolektif eser; Yusuf Halaçoğlu, Hikmet Özdemir, Kemal Çiçek,

Ömer Turan ve Ramazan Çalık tarafından yazılmış, hazırlanması yıllar sürmüş ve önemli ölçüde finansal kaynak heba edilmiştir.

Eser, Osmanlı İmparatorluğu'ndaki Ermenilerin I. Dünya Savaşı yıllarındaki kaderini yoruma ilişkin "yeni bir gayret" olma eğilimi taşımakla beraber, tarihi gerçekliği tahrif etmeye yönelik boş bir gayretten öteye gidememektedir. "Osmanlı devletinde Ermeni nüfusu" "Tehcir ve Ermenilerin Suriye Nakli" "Tehcir sonrasında Ermeniler" bölümlerinden oluşan eser, Türk resmi tarihçiliğinin bilinen iddialarını yanlış bilimesel verilerle renklenmiş halde sunmaktadır.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք 3

Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակն ըստ թուրքական և արևմտյան թուրքամետ պատմագրության 10

«Հայեր. Աքսոր և գաղթ» նորաթուխ աշխատությունը. ցեղասպանության ժխտման նա մի փորձ 21

Վերջաբան 76

Հավելվածներ 78

Հավելված 1
Հայերի տեղահանությունը (բողոքականներ) 78

Հավելված 2
Հայ ներգաղթողների վիճակագրությունը 79

Հավելված 3
Թուրքական պատմական ընկերության «Հայեր. Աքսոր և գաղթ» աշխատությունում վկայակոչված փաստաթղթերից մեկն այնպես, ինչպես պահպանված է ամերիկյան արխիվներում 80

Summary 88

Özet 90

Չափը՝ 60 × 84: 5,75 տպ. մամուլ:
Թուղթ՝ օֆսեթ 80 գր.: Տպագրություն՝ օֆսեթ:

Տպագրություն՝ «Նահապետ» ՍՊԸ